



Պաշտօնաթերթ
Ս. Գ. Հնչակեան Կուսակցության
Արևմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Բարի Գալուստ Վեհափառ Յայրապետին

Գարեգին Բ. Ամենայն Յայոց Կաթողիկոսը այս օրերուն պիտի այցելի Լոս Անճելես, Արևմտեան Ամերիկայի Թեմի 90-ամեակի տօնակատարություններու ծիրէն ներս:

Վեհափառ Յայրապետի այցելութիւնը անկասկած խանդավառութիւն պիտի ստեղծէ մեր համայնքի կեանքէն ներս: Մեծ թիւով հայեր պիտի փութան մաս կազմելու Վեհափառի այցելութեան առթիւ նախատեսուած եկեղեցական եւ այլ միջոցառումներուն ու լսելու Գարեգին Բ. ի պատգամները ու հաղորդուելու անոնցմով:

Եկեղեցական արարողութիւններու եւ ազգային հաստատութիւններուն կատարելիք այցելութիւններու աւարտին, Արևմտեան Ամերիկայի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, Ամենայն Յայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, Առաջնորդարանէն ներս պիտի գումարուի Գերագոյն Յոգեւոր Խորհուրդի նիստ, որուն պիտի մասնակցին աշխարհի տարբեր կողմերէն ժամանած բարձրաստիճան հոգեւորականներ:

Նման այցելութիւններ եւ ժողովներ, իրենց կրօնական բնոյթէն անկախ կարելոր են նաեւ այլ առումներով:

Կ'ապրինք ժամանակաշրջանի մը մէջ երբ աշխարհ, ներառեալ հայութիւնը՝ Յայաստանի եւ սփիւռքի տարածքին, կը դիմագրաւեն բազմատեսակ եւ բազմաբնոյթ մարտահրաւերներ: Ընկերային եւ այլ ընդունուած կարգեր ու սովորութիւններ փոխ կու գան եւ կ'ենթարկուին փոփոխութիւններու: Յայ եկեղեցին, որ պատուով կը կատարէ իր պատմական եւ ազգային առաքելութիւնը, միշտ չէ որ կ'անդրադառնայ այդ հարցերուն: Յատկապէս երիտասարդութիւնը կարիք ունի ծանօթանալու հայ եկեղեցւոյ տեսակետներուն՝ այսօրուայ երեւոյթներուն նկատմամբ: Կը մաղթենք որ, Վեհափառ Յայրապետի պատգամներուն ընդմէջէն ու նաեւ Գերագոյն Յոգեւոր Խորհուրդի նիստերու ընթացքին անդրադարձ կ'ըլլայ այդ հարցերուն, ու կը տրուին յստակ բացատրութիւններ, որպէսզի շեշտուի Յայ եկեղեցւոյ դերի կարեւորութիւնը Յայ անհատներու առօրեայ կեանքէն ներս:

Չենք ուզեր «հին էջեր» բանալ, սակայն այս այցելութիւնը նաեւ կարելոր է անգամ մը եւս վերահաստատելու Մայր Աթոռ Ս. Էջմիածինի գերակայութիւնը, որպէս Յայ Առաքելական Եկեղեցւոյ բարձրագոյն հոգեւոր կեդրոնը, որուն հաւատացողը եւ ջատագովը եղած է ու կը մնայ «Մասիս» ու անոր շրջանակը:

Բարեբեր այս այցելութեան առթիւ Վեհափառ Յայրապետին կը մաղթենք բարի գալուստ եւ բարի կեցութիւն:

«ՄԱՍԻՍ»

Ս. Սարգսեան Բանակի Արդիականացման 7-ամեայ Ծրագիր Կը Պահանջէ



Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ Պաշտպանական ազգային հետազօտական համալսարանէն ներս

Հոկտեմբերի 24-ին կայացած Պաշտպանութեան Նախարարութեան Պաշտպանական ազգային հետազօտական համալսարանի (ՊԱՀՀ) կրթական նոր ծրագրի մեկնարկը ազդարարող նիստի ընթացքին նախագահ Սերժ Սարգսեան յայտարարած է որ, Հայկական բանակին այսօր ուժեղ է եւ մարտունակ եւ ունակ է կատարելու իր առջեւ դրուած խնդիրները:

«Մեր բանակն այսօր ուժեղ է եւ մարտունակ, սակայն դա չի նշանակում, թէ մեր գինուած ուժերը չպէտք է կատարելագործուեն եւ զարգանան: Մենք այսօր սահմանում ենք նոր՝ անհամեմատ բարձր նշանոյ: Հայաստանի Հանրապետութեան գինուած ուժերի կտրուկ արդիականացումը ժամանակի պահանջն է: Դա նաեւ թելադրուած է ինչպէս այսօրուայ, այնպէս էլ ապագայի մարտահրաւերներով: Ես այսօր խնդրի եմ դնում մշակել բանակի արդիականացման նոր եօթնամեայ ծրագիր՝ 2018-2025 թուականների համար: Այդ ծրագիրը պէտք է իրականութիւն դարձնենք համատեղ ուժերով՝ ես, որպէս գլխավոր հրամանատար, Պաշտպանութեան նախարարը, գինուած ուժերի հրամանատարական կազմը, մեր գինուորները եւ ողջ հասարակութիւնը», - յայտնած է Սերժ Սարգսեան:

Սերժ Սարգսեան ՀՀ Պաշտպանութեան նախարարին յանձնարարած է երկամսեայ ժամկէտի մէջ գեկուցել այս ուղղութեամբ իր կատարած աշխատանքին մասին: Քննարկումներէ եւ լրամշակումներէ ետք այդ ծրագիրը պիտի հաստատուի 2018 թուականի Յունուարի 28-ին, այսինքն՝ Բանակի հիմնադրման օրը:

«Ծրագիրը պէտք է լինի այս փուլում մեր պետութեան գլխավոր խնդիրներից մէկը, եթէ ոչ ամենապատակով:

Շար.ը էջ 4

Ատրպէյճան Կիրառած է «ՍՓԱՅՔ» Յրթիռներ

Ատրպէյճանի գինուած ուժերը խախտելով վերջերս ԵԱՀԿ Մինսկի խումբի համախաղաղահանրու միջնորդութեամբ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու միջեւ ժնեւի մէջ տեղի ունեցած հանդիպման ժամանակ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը, Մարտակերտ-Մատաղիս ուղղութեամբ կիրառած են հրետանային գինատեսակներ, հայկական դիրքերուն վրայ արձակելով ականանետի 5 արկ եւ «ՍՓԱՅՔ» տիպի մէկ հրթիռ:

Արցախի Պաշտպանութեան նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ նշուած է. «Կատարուածը փաստում է, որ, ինչպէս միշտ, Պաքուն ոչ միայն հակուած է ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը նպատակաւորաբար խաղաղ կարգաւորմանն ու չարդարացուած կորուստների բացառմանը, այլեւ հակառակը՝ կանխամտածուած սադրանքների միջոցով գնում է իրադրութեան ապակալունացմանը:

Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան նախարարութիւնն ամենայն պատասխանատուութեամբ Պաքուի ռազմաքաղաքական ղեկավարութեանն զգուշացնում է, որ սադրանքները շարունակուելու դէպքում պատասխանը լինելու է անհամարժէք եւ բաւականին ցաւոտ»:

Հնչակեան Կուսակցութիւնը Կոչ Կ'ընէ Արտասահմանի Լիբանանցիներուն Արձանագրուելու՝ Ընտրութիւններուն Մասնակցելու Համար

Լիբանանի շրջանի ՍԴՀնչակեան Կուսակցութեան նորընտիր ատենապետ եւ Խորհրդարանի անդամ՝ Ընկ. Սեպուհ Գալիֆազեան կոչ ըրած է արտասահմանի մէջ բնակող Լիբանանցիներուն եւ չատկապէս հայերուն ու Հնչակեան համակիրներուն, իրենց գտնուած երկիրներուն մէջ արձանագրուելու՝ յաջորդ տարի տեղի ունենալիք Խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցելու իրաւունք ձեռք ձգելու համար:

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան արտասահմանի Լիբանանի ղեկավարներէն եւ հիւպատոսարանէն ներս, վերջին պայմանաժամն ունենալով Նոյեմբերի 21-ը:


Ընկ. Գալիֆազեան շեշտած է որ, առաջին անգամ ըլլալով, արտասահման գտնուող Լիբանանցիները իրաւունք պիտի ունենան մասնակցելու ընտրութիւններուն եւ պիտի կրնան իրենց ձայնը լսելի դարձնել երկրի ապագային նկատմամբ:

«CNN»-ի Լրագրող Էնթոնի Պորտան Պիտի Յայտնուի Ատրպէյճանի «Սեւ Ցուցակին» Վրայ

«CNN» հեռուստաընկերութեան ամենաբարձր վարկանիշը ունեցող հեռուստահաղորդումներէն մէկուն հեղինակն ու վարողը՝ Էնթոնի Պորտան պիտի ընդգրկուի Ատրպէյճանի անցանկալի անձեր ուցուցակին մէջ, Լեւոնային Ղարաբաղ այցելելուն համար: Այս մասին յայտնած է Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ Հիքմէթ Հաճիեւ:

Անցեալ շաբաթ ամերիկացի յայտնի խոհարար եւ հեռուստալրագրող Էնթոնի Պորտան այցելած էր Հայաստան, ապա Լեւոնային Ղարաբաղ, «Էնթոնի Պորտան» անձանօթ վայրեր» ծրագրի հերթական հաղորդումը նկարահանելու նպատակով:

Այս ձամփորդութիւնը «հրաշալի» որակելով, Պորտան իր թուիթըրեան էջին վրայ շնորհակալու-



Նշանաւոր հաղորդավար՝ Էնթոնի Պորտան

թիւն յայտնած է, մասնաւորապէս, ամերիկահայ ռոք երաժիշտ Սերժ Թանկեանին:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայկական Բանակն Ու Համանախագահները Ցոյց Տուեցին Ալիեւին

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Արցախի պաշտպանութեան բանակը հրապարակել է ատրպէյջ-ճանական դիրքերի ուղղութեամբ ատրպէյջճանական կողմից Սպայկ տիպի հրթիռի արձակման տեսանիւթ, որտեղ երեւում է, թէ ինչպէս է հրթիռը սլանում դէպի հայկական դիրքեր:

Մի քանի ամիս տեւած ընդ-միջուկից յետոյ Ատրպէյջանը առաջին անգամ հայկական դիրքերի ուղղութեամբ արձակել է արկեր եւ հրթիռ, ինչը տեղի է ունեցել ժընեւի հանդիպումից յետոյ: Միւս կողմից, այստեղ ուշադրութեան է արժանի հանգամանքը, որ հայկական կողմն ամիսներ առաջ կայացրեց որոշում, որ հրադադարի խախտումների վերաբերեալ չեն տրուելու այսպէս ասած ամենօրեայ ամփոփագրեր: Այդ պրակտիկան կիրառուում էր 1-2 տարի, գուցէ աւելի:

Մի քանի ամիս առաջ հայկական կողմը հրաժարուեց դրանից, բաւարարուելով շաբաթական ամփոփագրերով: Բացառուած է, որ այդ ընթացքում եղած լինեն արկերի օգտագործմամբ միջադէպեր, որոնք չեն ստացել լայն տեղեկատուական տարածում: Այլ կերպ ասած, հայկական կողմը տեղեկատուական իր այդ որոշմամբ փաստացի ստեղծեց մի վիճակ, երբ հրադադարի խախտումների այսպէս ասած սովորական դարձած եւ

հայաստանեան ու արցախեան հանրութեանը բացի լարուածութեան մէջ պահելուց, միջազգային հանրութեանը ոչինչ չասող ամենօրեայ ամփոփագրերի փոխարէն, ստացաւ հրադադարի խախտումները անհրաժեշտութեան դէպքում նաեւ միջազգային հանրութեան ուշադրութեանը հասցնելու հնարաւորութիւն:

Միեւնոյն ժամանակ, կասկածից վեր է, որ ժընեւից յետոյ հայկական կողմում թէ դիպուկահարի կրակոցից զոհի, թէ նաեւ յետոյ արկերի ու հակա-տանկային հրթիռի կիրառումն առնուազն առաջացնում է հարց, թէ արդեօ՞ք ժընեւի հանդիպումը վերստին չի ազատում Ատրպէյջանի ձեռքը հրադադարի խախտումների համար, այն բանից յետոյ, երբ ժընեւում չի յիշատակուել Վիեննայի օրակարգը:

Միւս կողմից, ժընեւից յետոյ Սերժ Սարգսեանը յայտարարեց, թէ ինքն ու Ալիեւը կոնկրետ հարց չեն քննարկել, սակայն պայմանաւորուել են քայլեր կատարել սահմանի լարուածութիւնը էլ աւելի թուլացնելու համար: Սարգսեանը յայտարարել էր, թէ Ալիեւն էլ այդ հարցում շահագրգռուած է:

Միւս կողմից, ընդհանուր առմամբ, արցախեան հակամարտութեան բնոյթն այնպիսին է, որ հազիւ թէ սահմանի իրադարձութիւններն ու միջադէպերը պայմանաւորուած լինեն ժընեւում կամ որեւէ այլ տեղ հանդիպում-

ների յաճախակիութեամբ կամ հազուադէպութեամբ, կամ դրա բացակայութեամբ:

Ամէն ինչ կախուած է շատ կոնկրետ քաղաքական իրավիճակից, եւ հանդիպումը չի կարող միարժէք լաւ լինել մի կողմի համար, իսկ միւս կողմի համար միարժէք վատ: Ամէն ինչ կախուած է ընթացիկ գործողութիւններից եւ վիճակից:

Այդ տեսանկիւնից, յատկանշական է Արցախի ՊԲ թէ յայտարարութիւնը, որ Ատրպէյջանի շարունակելու դէպքում պատասխանը լինելու է ասիմետրիկ եւ ցաւոտ, թէ նաեւ հրթիռի արձակման տարածուած տեսանիւթը:

Բանն այն է, որ այդ տեսանիւթով հայկական բանակը եւ նաեւ Միւսկի խմբի համանախագահները Ալիեւին յիշեցնում են թերեւս ամենակարեւորի՝ հայկական առաջնագծում տեղադրուած հրադադարի պահպանման մեխանիզմի մասին, ինչպիսին հանդիսանում է Հայաստանի գինուած ուժերի խորքային հետախուզութեան եւ տեսադիտարկման կարողութիւնը:

Այդ համալրումը անկասկած նաեւ Միւսկի խմբի համանախագահների քաղաքական համաձայնութեան արդիւնք է, իհարկէ նուազագոյն, բայց կարեւոր արդիւնք: Եթէ համանախագահները զան աւելի լայն համաձայնութեան, ապա Ատրպէյջանը չի կարող դիմադրել հրադադարի մեխանիզմի

դէ իւրէ ներդրմանն ու միջազգային պատասխանատուութեանը: Բայց, դէ իւրէ այդ ամրագրումը չի բխում Ռուսաստանի ռազմավարութիւնից, քանի որ մարտավարական առումով ներկայումս սահագրգռուած լինելով կայունութեամբ, այդուհանդերձ ռազմավարական տեսանկիւնից հրադադարի մեխանիզմի դէ իւրէ ներդրումը դիտարկում է որպէս հակամարտութեան հանդէպ ռազմական մենեջմենտի մոնոպոլ դիրքի կորուստ:

Ալիեւին թերեւս «յիշեցնում» են հրադադարի պահպանման մեխանիզմի «դէ ֆակտո» գոյութեան մասին, ցոյց տալով, որ այն շարունակում է աշխատել: Ատրպէյջանն արդէն ամիսներ առաջ իր համար զգացել է դրա աշխատանքի ցաւոտ հետեւանքը: Միւս կողմից, իհարկէ, Ալիեւի համար երբեք նշանակութիւն չի ունեցել սեփական գինուորի կեանքը: Առաւել եւս, երբ նա բաւական լուրջ տնտեսա-քաղաքական խնդիրներ ունի Ատրպէյջանի ներքին կեանքում:

Աւելին, հարց է, թէ Ալիեւը որքանով է ինքը վերահսկում այդ կեանքը: ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայում նրա ելույթի ընթացքում կնոջ եւ դստեր այսպէս ասած ցուցադրութիւնը, որ յիշեցնում էր «ընտանիքի հօր» նկատմամբ «փափուկ ուժի» կիրառում, վկայեց, որ Ալիեւը առնուազն ընտանեկան շրջանակում կորցրել է որոշում կայացնողի կարգավիճակը:

Ըստ երեւոյթի, աւելի է հասունանում եզրահանգումը, որ լարուածութեան թուլացման հարցում էական նշանակութիւն է ունենալու այն, թէ երբ եւ ինչ մեխանիզմով է ստացուելու, որ Ալիեւը եւ կինը փոխանակեն «ամբիոնն» ու «սելֆի ձողը»:

«ԼՐԱԳԻՐ»

2018-ին Ընդառաջ.

Սերժ Սարգսեանի Գործը Գնում է Իր Հուճով

ՀԱՅԿ ՂԱԻԹԵԱՆ

Սերժ Սարգսեանը հրաւիրել է խորհրդակցութիւն՝ 2018 թուականին Հայաստանում կայանալիք երեք խոշոր միջոցառումների՝ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի, Հայաստանի Հանրապետութեան եւ մայրսեան հերոսամարտերի 100-ամեակի ու Երեւանի հիմնադրման 2800-ամեակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը քննարկելու նպատակով:

Ինչպէս տեղեկացրին ՀՀ Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան եւ տեղեկատուութեան միջոցների հետ կապերի վարչութիւնից, յիշեալ միջոցառումների նախապատրաստման եւ անցկացման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծուել են յանձնաժողովներ, հաստատուել են դրանց անհատական կազմերը, եւ յանձնաժողովներին տրուել են յանձնարարականներ:

Սարգսեանն ընդգծել է, որ երեք միջոցառումներն էլ ունեն առանձնապատուկ նշանակութիւն եւ պէտք է անցնեն անթերի՝ կազմակերպչական շատ բարձր մակարդակով, սակայն առանձնապատուկ շեշտել է Երեւանում 2018թ. Հոկտեմբերի 11-12-ին կայանալիք Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը. «Ըստ էութեան, Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը կը լինի Հայաստանի անկախացումից յետոյ ամենախոշոր միջոցառումը՝ աշխարհի ֆրանկոֆոն երկրների ղեկավարների, բարձրաստիճան բազմաթիւ պատուիրակութիւնների մասնակցութեամբ: Ենթադր-

ուում է, որ 100-ից աւելի պատուիրակութիւններ եւ մինչեւ հինգ տասնեակ պետութիւնների ղեկավարներ կը մասնակցեն գագաթնաժողովին: Սա մեծ միջոցառում է, որի սահուն կազմակերպումը պէտք է վկայի մեր պետական մարմինների կայացուածութեան մասին», - ասել է Սարգսեանը:

Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի նախապատրաստման աշխատանքների կատարման ընթացքի մասին զեկուցել է արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանը, որը Սերժ Սարգսեանի հրամանագրով ստեղծուած պետական յանձնաժողովի նախագահի տեղակալն է: Ի պաշտօնէ, բոլոր երեք միջոցառումների համար ստեղծուած պետական յանձնաժողովների նախագահը վարչապետ Կարէն Կարապետեանն է: Սակայն համակարգման եւ կազմակերպչական աշխատանքների գործառույթը դրուած է փոխնախագահների վրայ: Ֆրանկոֆոնիայի դէպքում դա Էդուարդ Նալբանդեանն է, մայրսեան հերոսամարտերի 100-ամեակի դէպքում՝ Վիգէն Սարգսեանը, իսկ Երեւանի 2800-ամեակի դէպքում՝ Տարոն Մարգարեանը: Բացի Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարեանից, որը զբաղեցնում է ընտրովի պաշտօն, մնացած բոլոր յանձնաժողովների պատասխանատուներն, ըստ էութեան, կարող են մինչ այդ միջոցառումների իրականացումը, այլեւս կառավարութեան անդամ չլինել: 2018 թուականի Ապրիլի աւարտում է Սերժ Սարգսեանի նախագահութեան ժամկէտը եւ Հայաստանում ամբողջութեամբ ուժի մէջ է մտնում

նոր սահմանադրութիւնը: 2018-ի Ապրիլին կառավարութիւնը՝ Կարէն Կարապետեանի գլխաւորութեամբ հրաժարական է ներկայացնելու: Այս պահին Սերժ Սարգսեանը թերեւս միակ մարդն է, ով հաստատապէս գիտի, թէ 2018-ի Ապրիլից յետոյ ովքեր են լինելու կառավարութեան կազմում, ով է լինելու վարչապետը եւ ի վերջոյ՝ վերը նշուած պետական յանձնաժողովների կազմերում ընդգրկուած պաշտօնեաները կարողանալու են այդ միջոցառումներն աւարտին հասցնել: «Հրապարակ» թերթը տեղեկութիւն էր հրապարակել, ըստ որի ԱԳ նախարար է Նալբանդեանը գոնէ մինչեւ 2019 թ. կը մնայ իր պոստումը:

Նման միջնորդութիւն, ըստ թերթի, արել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լաւրովը: Հիմնական արգումենտներից մէկը եղել է գալիք աշնանը Հայաստանում կազմակերպուելիք Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը, որի «կնքահայցը» Նալբանդեանն է եղել: Մամուլում նաեւ հրապարակում էր եղել, թէ Սերժ Սարգսեանն ու Կարէն Կարապետեանը 2018-ի հարցով արդէն պայմանաւորուել են եւ եկել համաձայնութեան, որ վարչապետի պաշտօնը, որը դառնալու է թիւ 1 քաղաքական պոստը, կը մնայ Սերժ Սարգսեանին, իսկ Կարէն Կարապետեանը կը դառնայ առաջին փոխվարչապետ: Այսինքն՝ գործը զնուած է իր հունով. Սերժ Սարգսեանը Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի պատմական իրադարձութիւնը կը վայելի անձամբ:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՅԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երիտասարդները Ընդդեմ Պաշտպանութեան Նախարարութեան Օրինագիծին



Երեւանի մէջ ուսանողները բողոքի ցոյց կազմակերպած են Պաշտպանութեան նախարարութեան օրինագիծին դէմ

«Զինծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Պաշտպանութեան նախարարութեան օրինագիծը կը սպառնայ ուսանողական ըմբոստութեան պատճառ դառնալ:

Երեւանի մէջ ուսանողները բողոքի ցոյց կազմակերպած են օրինագիծին դէմ:

«Յանուն գիտութեան զարգացման» նախաձեռնութեան անդամ Սարգիս Բալդարեան յայտարարած է. «Պայքարի մարտավարութիւնը որոշելու եմ ոչ թէ ես, ոչ թէ այս շարժման նախաձեռնող խումբը, այլ որոշելու են բոլոր էն ուսանողները, որոնք միանալու են մեր պայքարին»:

Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանի նախաձեռնած օրինագիծով բոլոր արական ուսանողները պէտք է ծառայեն բանակի շարքերուն 18 տարեկան դառնալուն պէս: Նախարար այն կը բացատրէ հասարակական արդարութեամբ: 2004-ին Սերժ Սարգսեանի այսպիսի օրինագիծի մը դէմ յաղթանակած Արէն Մանուկեան վստահ է, որ հասարակական ար-

դարութիւնն այստեղ կապ չունի, իշխանութեան նպատակը երիտասարդները զոմպիացնելն է. «Բանակը շատ լուրջ կորուստ է ունենում, որովհետեւ դրանից յետոյ արդէն մտնում են բանակ 18 տարեկանները, այսինքն, առանց կրթութեան դպրոցի կրթութեամբ 18 տարեկան երիտասարդներն են գնում բանակ, որոնք ուղղակի դառնում են շարքայիններ»:

Օրինագիծով ուսման ընթացքին չծառայող ուսանողները պայմանագիր պէտք է կնքեն Պաշտպանութեան նախարարութեան հետ եւ երեք տարի որպէս սպայ ծառայեն բանակի շարքերուն: Անոնք պէտք է մոռնան ուսումնական արտելէ անմիջապէս ետք ասպիրանտուրա ընդունուելը: Ըստ Սարգիս Բալդարեանի, «Երիտասարդ գիտնական հասկացութիւնը այս օրինագիծի պարագայում վերանալու է»:

Ուսանողութիւնը վստահ է, որ պիտի չտապալի օրէնքին դեմ պայքարին մէջ: Եթէ իրենք տապալին, պիտի տապալի նաեւ պետութիւնը:

Արթուր Սաքունց. «Սերժ Սարգսեանի Ելոյթը Ինքնախոստովանանք է»

Իրաւապաշտպան Արթուր Սաքունց պնդած է, թէ նախագահ Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը ինքնախոստովանանք է, որ յանցագործութիւններու հովանաւորը իշխանութիւնն է:

Իրաւապաշտպանի կարծիքով, յանցաւորութեան դէմ պայքարին մէջ ոստիկանութիւնը քննադատելով, Սերժ Սարգսեան կարծես թէ կը մոռնայ, որ Վլատիմիր Գասպարեան իր իսկ հրամանով ու համաձայնութեամբ արդէն 6 տարի է, որ կը զբաղեցնէ ոստիկանապետի պաշտօնը, ու բարձրաստիճան այլ սպաներու հետ գրեթէ ամէն տարի բարձրագոյն պարգեւներու կ'արժանանայ:

«Ապրիլի 2-ին նախորդող օրը զանգուածային ընտրակաշառքներ են եղել, ահագանգեր: Էդ նոյն ժամանակ էլ նոյն ոստիկանութիւնից ինքը պահանջներ ներկայացրել է, որ էս ի՞նչ էք անում, աշխատէ՛ք, հետեւէ՛ք, բռնէ՛ք, կանխէ՛ք, պատասխանատուութեան ենթարկէ՛ք: Պարզ էի, որ ոստիկանութիւնը տեսնում ա, որ անպատիժ փող են բաժանում, յանցագործութիւն են կատարում, ինքն էլ անպատիժ վարքագիծ ա դրսևերելու», - ըսած է Սաքունց:

Նախագահ Սերժ Սարգսեան



Իրաւապաշտպան Արթուր Սաքունց

կոշտ քննադատութեան ենթարկած է ոստիկանութեան գործունէութիւնն ու որոշ ոստիկաններու վարքագիծը: Ելոյթ ունենալով ոստիկանութեան անձնակազմի ընդլայնուած նիստին, Սերժ Սարգսեանմասնաւորապէս հաստատած է, որ վերջին շրջանին աւելցած է յատկապէս ծանր յանցագործութիւններու թիւը. - «Ինչպէս է պատահում, որ օրը ցերեկով, շատերի աչքի առջեւ հրագէնի գործադրմամբ կատարուում են ծանր յանցագործութիւններ: Այս երեւոյթը մտահոգիչ է նաեւ այն առումով, որ նման դէպքերը էն պակասում, այլ աւելանալով՝ ստանում են առաւել յանդուգն դրսևերումներ», ըսած է նախագահը:

«USAID» Ունի Գործիքներ, Որոնցմով Կը Զետեւի Հայաստանի Կառավարութեան

«USAID»-ի հիմնական առաքելութիւնն է աջակցիլ Հայաստանի զարգացման: Այս մասին «Ազատութիւն» ռատիոկայանին տուած հարցազրոյցի ժամանակ նշած է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան երեւանեան գրասենեակի ղեկավար Տեպորա Կրիզըր:

«Մենք էլ, որ պէտք է ուղղութիւն ցոյց տանք, բայց մենք այստեղ ենք, աջակցելու համար Հայաստանի զարգացման: Վերջին երկու տարիներու ընթացքին, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան գործունէութեան մեծ մասը ներկայ ծրագիրներու 60 տոկոսը, կ'իրականացնեն տեղական կազմակերպութիւնները կամ կառավարութիւնը: Այսպիսով, գաղափարը, ինչպէս արդէն նշեցի, այն է, որ մենք կ'աջակցինք Հայաստանի կառավարութեան, անոնք կ'առաջնորդեն, իսկ մենք կը փորձենք անոնց աջակցիլ», - ըսած է ան:

Հարցին, թէ ունի՞ք արդեօք միջոցներ կամ գործիքներ, որոնցմով կրնաք հետեւիլ ՀՀ կառավարութեան, Հայաստանին յատկացուող գումարներու օգտագործման, Կրիզըր պատասխանած է. «Այո՛, ունինք: Իրականութեան մէջ իբրեւ ԱՄՆ կառավարութիւն մենք ունինք խիստ կանոններ: Եւ ես սերտօրէն աշխատած եմ այս ուղղութեամբ այլ վայրերու մէջ»:

«Մեր բոլոր նախագիծերը, առնուազն այն ծրագիրները, որոնք կը ստանան որոշակի տոլարային գումար, պարտադիր պէտք է հաշ-



ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան երեւանեան գրասենեակի ղեկավար Տեպորա Կրիզըր

ուարկային վերստուգում անցնին անկախ կազմակերպութեան կողմէ: Եւ վերջապէս մենք կ'իրականացնենք ծրագիրի գնահատումը: Աւելի շատ ուշադրութիւն կը դարձուի նպատակներուն, եւ սովորաբար կրկին կը վարձենք արտաքին լիցենզիա մը, որ պարզապէս կ'ըսէ՝ արդեօք մենք հասա՞ծ ենք մեր նպատակին, հնարաւոր է, որ ծախսենք ամբողջ գումարը եւ այն բարեխճօրէն իրականացնենք, բայց արդեօք հասա՞ծ ենք մեր նպատակներուն», ըսած է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան երեւանեան գրասենեակի ղեկավար Տեպորա Կրիզըր:

Կառավարութիւնը Հաւանութիւն Տուած է Հանրաքուէի Մասին Օրէնքի Նախագիծին

Հայաստանի կառավարութիւնը հաւանութիւն տուած է հանրաքուէի մասին օրէնքի նախագիծին, որ նաեւ հնարաւորութիւն կու տայ քաղաքացիներուն հանրաքուէի օրինագիծեր դնել:

Օրէնքի անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է երկու տարի առաջ փոփոխուած Սահմանադրութեամբ, Գործադիրի նիստին յայտնած է նախագիծը ներկայացնող Արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեան. - «Գաղափարը հետեւեալն է, որ 50 հոգանոց նախաձեռնող խումբ կարող է ստեղծուել, որը գրանցուած է որպէս նախաձեռնող խումբ կենտրոնական ընտրական յանձնաժողովում, որից յետոյ սկսուած է ստորագրութիւնների հաւաքման գործընթացը: Ստորագրութիւնների քանակը յստակօրէն նախատես-

ուած է սահմանադրութեամբ: Ընտրելու իրաւունք ունեցող 300 հազար քաղաքացիի միանալու պարագային քաղաքացիական նախաձեռնութեան լիազօր ներկայացուցիչը դիմած է կեդրոնական ընտրական յանձնաժողով, ստորագրութիւններու վաւերականութեան հաստատման համար: Այնուհետեւ նախագիծը պէտք է ներկայացուի Սահմանադրական դատարան, եւ միայն գլխաւոր օրէնքին հակասելու պարագային, նախագահի կողմէ նախագիծը պիտի դրուի հանրաքուէի:

Իրաւապաշտպան Արթուր Սաքունցի կարծիքով, ստորագրութիւններու բարձր շեմը ինչպէս նաեւ օրէնքով նախատեսուած բարդ գործընթացը գործնականին մէջ անհնար կը դարձնեն քաղաքացիներու կողմէ որեւէ հարց հանրաքուէի դնելու հնարաւորութիւնը:

Դատարանը Սերժած է Անդրիաս Դուկասեանը Գրաւի Դիմաց Ազատ Արձակելու Միջնորդութիւնը

Ընդդիմադիր գործիչ, գանգուածային անկարգութիւններ կազմակերպելու մեղադրանքով անցեալ տարուայ Յուլիսէն ազատազրկուած Անդրիաս Դուկասեան պիտի շարունակէ մնալ ճաղերու ետին: Երեւանի էրեբունի եւ Նուբարաշէն վարչական շրջաններու ընդհանուր իրաւասութեան առաջին ատեանի դատարանն մերժած է Դուկասեանը գրաւի դիմաց ազատ արձակելու պաշտպանական կողմի միջնորդութիւնը:

Դուկասեան եւ իր պաշտպան Կարէն Մեժլումեան դատաւորին նաեւ ինքնաբացարկի միջնորդութիւն ներկայացուցած են, հարցն այժմ կը քննուի խորհրդակցական սենեակին մէջ:

Միջնորդութեան ընթացքին Մեժլումեան նշած է, որ դատաւորը քանի մը նիստերու ընթացքին ցոյց տուած է իր կողմնակալութիւնը, իսկ Անդրիաս Դուկասեան յայտարարած է, որ իշխանական վերնախաւը ճնշում կը բանեցնէ դատարանին նկատմամբ, եւ որ այս միջնորդութիւնը ուղերձ է նախ եւ առաջ նախագահ Սերժ Սարգսեանին:

Միջնորդութեան վերաբերեալ որոշումը պիտի հրապարակուի քանի մը ժամէն: Նախատեսուած էր, որ այսօր դատարանը նաեւ պիտի հարցաքննէր գործով անցնող վկայ ոստիկանները:

ԼՈՒՐԵՐ

Մեքսիկացի Պատգամաւորները Այցելած են Լեռնային Ղարաբաղ



Մեքսիկացի խորհրդարանականները Ծիծեռնակաբերդի յուշահամալիր այցի ընթացքին

Մեքսիկոյէն ժամանած պատգամաւորներ Պլանքա Մարգարիտա Քուաթրա Տոմինկէս, Մարիա Քրիստինա Թերեսա Կարսիա Պրաւոսե Բարլոս Էռնանտէս Միրընայցելած են Լեռնային Ղարաբաղ:

«Հոկտեմբերի 24-ին մեքսիկացի պատգամաւորները ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էտուարտ Շարմազանովի ուղեկցութեամբ այցելել են Ստեփանակերտի յուշահամալիր եւ ծաղիկներ խոնարհել ի յիշատակ Արցախեան ազատագրական պայքարում նահատակուած հայորդիներին», - նշուած է Հայաստանի Ազգային ժողովի հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդագրութեան մէջ:

Ըստ նոյն աղբիւրին, մեքսիկացի պատգամաւորներն ու Հայաստանի ԱԺ փոխնախագահը այսօր նաեւ հանդիպած են Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլեանի հետ:

Հանդիպման ժամանակ Էտուարտ Շարմազանով մասնաւորապէս խիստ դատապարտած է Ատրպէյճանի կողմէ զինադադարի հերթական խախտումը, աւելցնելով, որ այն ցոյց կուտայ, թէ այդ պետութիւնը նոյնիսկ ժնեւի հանդիպումէն ետք պատրաստ չէ

կառուցողական քայլերու: Անդատապարտած է նաեւ շփման գիծին վրայ Ատրպէյճանի կողմէ «ՍՓԱՅՔ» զինատեսակի կիրառումը եւ համոզմունք յայտնած, որ միջազգային կառուցները պարտաւոր են դատապարտել այդ փաստը:

Հոկտեմբերի 22-ին Մեքսիկացի խորհրդարանականները այցելած են Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր ծաղիկներ զետեղած են անմար կրակին մօտ եւ լուսթեամբ ու խոնարհումով յարգած Սուրբ նահատակներու յիշատակը:

Հիւրերը այցելած են նաեւ Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկը, ծանօթացած են Հայոց Մեծ եղեռնը հաւաստող փաստաթուղթերուն եւ վաւերագրերուն, դիտած ցուցանմուշները, զբաւում կատարած յուշամատենին մէջ:

Մեքսիկո-Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Պլանքա Մարգարիտա Քուաթրա Տոմինկէս նշած է. «Ինծի համար պատիւ էր այցելել այս մեծ երկիրը, ճանչնալ հերոսական ժողովուրդ մը, որ մեծ յարգանքներ վայելէ աշխարհի մէջ: Ես արդէն կը սիրեմ Հայաստանը»:

Բանակի Արդիականացման Ծրագիր

Շարունակուած էջ 1-էն

նազխաւորը: Եօթ տարի յետոյ ներկայումս արդէն իսկ մարտունակ բանակը պէտք է հասած լինի որակական նոր բացառիկ մակարդակի: Արդիականացման առաջին կարեւոր ուղղութիւնը սահուն անցումն է Սահմանադրութեան փոփոխութիւններէն ընդմիջումը: «Պաշտպանութեան մասին» օրէնքի նախագիծը, որ այս օրերին քննարկուած է Ազգային ժողովում, լուծում է այդ խնդրի կարեւոր, բայց միայն առաջին մասը՝ իրաւական ձեւակերպումը», - շեշտած է Սերժ Սարգսեան:

Նախագահն ընդգծած է, որ բանակի արդիականացումը կը վերաբերի ե՛ւ կազմակերպութեան մակարդակին, ե՛ւ զինատեսակներուն, ե՛ւ զինուորականներու հասարակական հարցերուն, այսինքն՝ բանակին հետ կապուած խնդիրներու ողջ համալիրին:

Սերժ Սարգսեան անդրադարձած է նաեւ զարաբաղեան խնդիրին, ընդգծելով, որ այս

հանգրուանին հայկական կողմը «Արցախի մէջ ռազմական խնդիր լուծելու կամ ղենելու նպատակ չունի»:

«Խնդրի խաղաղ կարգաւորումը, ի թիւս այլ պայմանների, պէտք է իսպառ բացառի որեւէ ռազմական սպառնալիք Արցախի խաղաղ բնակչութեան հանդէպ: Երկրորդ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը, իսկապէս, չունի ռազմական լուծում: Ուստի, հնարաւոր չէ մէկ ձեռքով կրակել, իսկ միւսով բանակցել այդ լուծումը գտնելու նպատակով: Կամ բանակցում ենք, կամ էլ՝ կրակում: Երկուսին էլ մենք պատրաստ ենք: Բանակցութիւնները պէտք է տեղի ունենան գէնքի լուծութեան շնորհիւ ձեւաւորուող փոխադարձ վստահութեան պայմաններում: Կարճաժամկէտ տակտիկական կամ քարոզչական առաւելութիւն ստանալով՝ կողմերից ոչ մէկը որեւէ էական հարց իր համար չի լուծում: Ընդհանրապէս, սադրանքները պարզապէս անհնարին են դարձնում լուրջ բանակցութիւնները», - ըսած է ան:

Մետվետել. «Ռուսիա Կը Շարունակէ Մնալ Հայաստանի Առաջատար Գործընկերը»



Հայաստանի եւ Ռուսիոյ վարչապետներ՝ Տմիթրի Մետվետելի եւ Կարէն Կարապետեան մամուլի միատեղ ասուլիսի ընթացքին

Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ դաշնակցային յարաբերութիւնները տարուէ տարի տինամիք կերպով կը զարգանան: Լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ամփոփելով Ռուսիոյ վարչապետ Տմիթրի Մետվետելի հետ հանդիպման արդիւնքները, յայտարարած է ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեան:

Ան նշած է, որ տուեալները կը վկայեն աճի առկայութեան մասին, սակայն հանդիպման ժամանակ արձանագրած են, որ առաւել մեծ աճի հնարաւորութիւններ կան:

«Քննարկուել են համատեղ ներդրումային ու այլ ծրագրերի իրականացման հնարաւորութիւնները», - նշած է Կարապետեան:

Ռուսիոյ վարչապետ Տմիթրի Մետվետել յայտարարած է, որ հանդիպման ընթացքին համոզուած են, որ բոլոր ուղղութիւններով երկու երկիրներու յարաբերութիւններուն մէջ զար-

գացում կայ, ամէն ինչ շատ լաւ է:

«Ռուսիա կը շարունակէ մնալ Հայաստանի արտաքին առեւտրատնտեսական առաջատար գործընկերը, երկկողմ առեւտրաշրջանառութեան ծաւալները կ'աւելնան, ընդ որում աճը լաւ տեմպերով կ'ընթանայ», - յայտնած է ան:

Մետվետել ընդգծած է, որ հայ-ռուսական համատեղ ձեռնարկութիւններ կ'իրականացուին բարձր տեխնոլոգիաներու, ուժանիւթի, շինարարութեան, հեռահաղորդակցութեան ոլորտներու մէջ:

«Մենք նախանշած ենք այն ծրագրերը, որոնց ուղղութեամբ յառաջիկային պիտի աշխատինք», - յայտնած է Մետվետել, նշելով մարդասիրական, մշակութային ոլորտները:

Մետվետել շնորհակալութիւն յայտնած է Կարապետեանին, լաւ աշխատանքին ու հիւրընկալութեան համար:

Թուրք Գործիչի Ձերբակալութիւնը Ստահոգած է Միջազգային Հանրութիւնը

Միջազգային հանրութիւնը կը շարունակէ արձագանգել նախօրէին Պոլսոյ օդակայանին մէջ յայտնի հասարակական, մշակութային գործիչ, թուրք գործարար Օսման Քաւալայի ձերբակալութեան:

«Անտոլու Քիւլթուր» հասարակական կազմակերպութեան գործադիր նախագահ Օսման Քաւալա ենթարկուած էր Այնթապէն վերադարձին Աթաթուրքի անուան միջազգային օդակայանին մէջ: Ոստիկանները նաեւ խուզարկած են «Անատոլու Քիւլթուր» ի գրասենեակը եւ առգրաւած Քաւալայի ու անոր քարտուղարին համակարգիչները:

Թրքական «T24» լրատուականի փոխանցմամբ, Քաւալայի փաստաբան Ֆերաթ Չաղըլ յայտնած է, որ անոր ձերբակալութիւնը 7 օր պիտի տեւէ: Չաղըլ, սակայն, յստակ տեղեկութիւններ չէ հաղորդած Քաւալայի ձերբակալութեան պատճառներուն մասին:

Ոստիկանութեան պարզաբանմամբ, հետաքննութիւնը գաղտնի բնույթ կը կրէ: Յայտնի է նաեւ, որ իրաւապահ մարմինները Քաւալան պիտի հարցաքննեն «Յուլիսի 15-ի յեղաշրջման փորձէն առաջ տեղի ունեցած որոշ հանդիպումներու վերաբերեալ»:

Միեւնոյն ժամանակ Քաւալայի կրին՝ Այշէ Պուլըրա յայտարարած է, որ սխալ կը համարէ վաղաժամ գնահատական տալ տեղի ունեցածին: Ան յոյս յայտնած է, որ ամուսինին ձերբակալու-

թիւնը սխալմունք է:

Միացեալ Նահանգներու պետական բաժանմունքի խօսնակ Հիթըր Նաուրթ մտահոգիչ որակած է Քաւալայի ձերբակալութիւնը: Ան նշած է, որ Թուրքիոյ մէջ ձերբակալուած գիտնականներու, լրագրողներու, հասարակական գործիչներու եւ քթիւրխտներու դատական գործերուն մէջ բաւարար ապացոյցներ չկան, բան մը, որ անհանգստութեան պատճառ կը հանդիսանայ:

Թուրքիոյ քաղաքացիական հասարակութեան կարկառուն ներկայացուցիչներէն Օսման Քաւալայի ձերբակալութեան արձագանգած է նաեւ Ֆրանսայի Արտաքին գործոց նախարարութիւնը: Ֆրանսական արտաքին գերատեսչութեան խօսնակը յայտարարած է, որ ուշադիր պիտի հետեւին այս գործի զարգացումներուն, նշելով. - «Ինչպէս եւրոպական միւս երկիրները, Ֆրանսա նոյնպէս մշտապէս կը համագործակցի Քաւալայի հետ, որ Թուրքիոյ մշակութային կեանքի եւ քաղաքական հասարակութեան ամէնէն կարեւոր եւ յարգուած անուններէն մէկն է»:

Քաւալայի ձերբակալութեան լուրին ցաւով արձագանգած են նաեւ Հայաստանի հասարակական կազմակերպութիւնները, որոնք քանիցս առիթ ունեցած են համագործակցելու Օսման Քաւալայի հետ, բազմաթիւ ծրագրեր կեանքի կոչելով հայ-թրքական հաշտեցման գործընթացի ծիրին մէջ:

Ո՞վ է Սպառնում Հայաստանի Հասարակութանը

ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՄ

Թուում է, թե մինչ վերջին շաբաթները բաւականին սահուն ընթացող Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի գործընթացը աստիճանաբար վերածուում է ողիսականի: Յամենայնդէպս, վերջին շաբաթներին եւ առաւել եւս օրերին իրավիճակը դառնում է բաւականին անորոշ, եւ առաջ են գալիս բաւականին տագնապալի ազդակներ:

Հայաստանի իշխող կուսակցութեան փոխնախագահ, Աժարտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահ Արմէն Աշոտեանը յայտարարել է, որ Հայաստանն ամէն ինչ արել է Նոյեմբերին համաձայնագիրը ստորագրելու համար, եւ գնդակը Եւրամիութեան դաշտում է: Երբ Հայաստանի իշխանութիւնն ասում է, որ ինքն ամէն ինչ արել է, իսկ գնդակը միւս կողմի դաշտում է, բաւականին մտալ ասոցիացիաներ են առաջ գալիս յայտնի ֆուտպոլային դիւանագիտութեան հետ: Այդ առիթով էլ Երեւանը ինչ-որ ժամանակից սկսած յայտարարում էր, որ գնդակը Թուրքիայի դաշտում է: Խաղը, ինչպէս յայտնի է, այդպէս էլ մնաց անաւարտ, իսկ Սերժ Սարգսեանն էլ յայտարարեց, որ 2018-ի գարնանը Հայաստանը «պատուելու» է այդ արձանագրութիւնները:

Եթէ ֆուտպոլային դիւանագիտութեան պարագայում այդ զարգացումը Հայաստանի համար վտանգաւոր չէ եւ նոյնիսկ հնարաւոր է ասել, որ վտանգաւոր էր այն գինը, որով հայ-թուրքական արձանագրութիւններ էին ստորագրուում եւ յարաբերութիւն էր պատրաստուում կարգաւորուել, ըստ էութեան, թուրքական պայմաններով (իսկ որ հայ-թուրքական յարաբերութիւնը պէտք է կարգաւորուի պարզապէս առանց որեւէ նախապայմանի՝ դա անվիճելի է), ապա Հայաստան-ԵՄ համաձայնագրի դէպքում այդ օրինակ տապալումը, սառեցումը պարզապէս քաղաքական եւ նոյնիսկ ռազմաքաղաքական մեծ կորուստ կը լինի Հայաստանի համար:

Թուում է, որ իրավիճակի լիցքաթափում պէտք է լինէր համաձայնագրի տեքստի հրապարակումը, որ տեղի ունեցաւ օրեր առաջ: Սակայն, ինչպէս ցոյց է տալիս իրադարձութիւնների զարգացումը, բուն ինդիւրը կապուած է այդ տեքստի հետ: Հետեւաբար հարց է ծագում, թե ո՞րն է բուն ինդիւրը, որը ստիպում է գնդակին գտնուել այս կամ այն դաշտում: Համընդհանուր ընկալմամբ՝ ինդիւրը Ռուսաստանն է, որը չի ցանկանում Հայաստանի եւրախնեցրացիա ու ԵՄ-ի հետ յարաբերութեան խորացում: Բայց առաջանում է մէկ այլ հարց: Եթէ ինդիւրը Ռուսաստանն է, ապա այն թերեւս պէտք է արտայայտուէր Հայաստանի վրայ ազդեցութեամբ: Բայց Հայաստանը յայտարարում է, որ իրենից հասանելիք ամէն ինչն արել է:

Եւրամիութիւնը յամենայնդէպս առայժմ չի յայտարարել հակառակը, թե Հայաստանն է հնարաւոր կասկածներ առաջացնողը: Եթէ դա Հայաստանը չէ, յամենայնդէպս քանի դեռ ԵՄ-ն չի արել այդպիսի յայտարարութիւն, ապա նշանակում է, որ ինդիւրը կամ Ռուսաստանը չէ՝ Հայաստանի վրայ ազդեցութեամբ, կամ Ռուսաստանն ազդեցութիւն ունի նաեւ ԵՄ-ի վրայ, ընդ որում՝ այնքան, որ կարող է տապալել Հայաստանի հետ համաձայնագրի ստորագրումը:

Աներկբայ է, որ յամենայնդէպս հայկական կողմի յայտարարութիւններից յետոյ ինդիւրը իսկապէս գտնուում է ԵՄ դաշտում՝ առնուազն հարցերին պատասխանելու մակարդակով: Աներկբայ է, որ առաջացել է իրավիճակ, երբ առկայ է նախնական պայմանաւորութիւններից եւ համաձայնութիւններից հրաժարուելու հարց: Ընդ որում, հարց, որն արտացոլուած է Հայաստան-ԵՄ համաձայնագրում, ըստ այդմ՝ չափելի չէ հանրային հայեացքի տեսանկիւնից: Բայց իրավիճակի զոհ, խոշոր հաշուով, դառնալու է հենց Հայաստանի հասարակութիւնը, եթէ իրականանան, այսպէս ասած, վատագոյն կանխատեսումները, ու չստորագրուի, յետագուի Հայաստան-ԵՄ համաձայնագրի ստորագրումը:

Այդ համաձայնագրի գլխաւոր շահառուն Հայաստանի հասարակութիւնն է եղել եւ մնում ու լինելու է Հայաստանի հասարակութիւնը: Ո՞վ է ռիսկի տակ դնում Հայաստանի հանրութեան շահն ու նաեւ վստահութիւնը:

Պարուի մէջ ԱՄՆ Նախկին Դեսպան.- Մակնիթսքի Օրէնքը Պետք է Կիրառել Ատրպէյճանի Նկատմամբ


«Թրամբի վարչակազմը պէտք է օգտագործէ Մակնիթսքի օրէնքը Ատրպէյճանի մէջ մարդու իրաւունքներու խախտումներու եւ կաշառակերութեան համար», - «American Interest» պարբերականին մէջ գրած է Ատրպէյճանի մօտ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Ռիչըրտ Քոզլարիչ:

Ամերիկացի դիւանագէտը ծաւալուն յօդուածի մէջ մանրամասն նկարագրած է վերջին շրջանին Ատրպէյճանի մէջ լրագրողներու, իրաւապաշտպաններու, Ալիեւի ռեժիմի ընդդիմախօսներու նկատմամբ իրականացուող ճնշումները եւ կոչ ուղղած ԱՄՆ Քոնկրէսին ընդունելու Սմիթի եւ Մըք Կաւըրնի օրինագիծն ու մեծ լսումներ կազմակերպելու Ատրպէյճանի հարցով:

1994-1997 թուականներուն Ատրպէյճանի մօտ ԱՄՆ դեսպանի պաշտօնը զբաղեցուցած Քոզլարիչ, որ յաճախ տարբեր

ամպիոններէ կը քննադատէ ատրպէյճանական իշխող ընտանիքը, ամերիկացի օրէնսդիրներուն կոչ ուղղած է պատժամիջոցներ սահմանելու, մասնաւորապէս, Ատրպէյճանի ոստիկաններուն, դատաւորներուն եւ քաղաքական առաջնորդներուն նկատմամբ:

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի վարչակազմին դէմ պատժամիջոցներ սահմանելու մասին օրէնսդրական նախաձեռնութիւնը, որ արդէն ամերիկեան Քոնկրէսի օրակարգին մէջ է, հեղինակած են հանրապետական Քրիսթոֆըր Սմիթ եւ Մակնիթսքի յայտնի օրէնքի հեղինակ դեմոկրատ ձիմ Մըք Կաւըրն: Բանաձեւը կոչ կ'ուղղէ պատասխանատուութեան ենթարկել մարդու իրաւունքներու չզաղրող ոտնահարումներուն մէջ մեղքի իրենց բաժին ունեցող ատրպէյճանցի պաշտօնեաները:



Կազմակերպութեամբ՝
Նոր Սերունդ Մշակութային Միութեան

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նիւթ՝
Հայաստան-Սփիւռք 6-րդ Համաժողովը
Չորեքշաբթի, Հոկտեմբեր 25, 2017
Երեկոյեան ժամը 8-ին

Կը մասնակցին՝
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՄԳՀԿ Արեւմտեան Ամերիկայի Ատենապետ
ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ
ՀՅԴ Պաշտօնաթերթ Ասպարէզ Օրաթերթի Խմբագիր
ՅԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ՌԱԿ Պաշտօնաթերթ Նոր Օր Շաբաթաթերթի Փոխ-խմբագիր
ՅԱՐՈՒԹ ՊՐՈՆՈՋԵԱՆ
Անկախ Գործիչ
Մտաքը Ազատ

**Կլէնտելի Հանրային Գրադարանի սրահէն ներս.
Հասցէ՝ 222 E. Harvard Street, Glendale, CA 91205**

Կարէն Կարապետեան եւ Ռիչըրտ Միլս քննարկած են Կաշառակերութեան Դէմ Պայքարի Մէջ Համագործակցութեան Հարցերը



Վարչապետ Կարէն Կարապետեան այսօր ընդունած է Հայաստանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Ռիչըրտ Միլսն ու ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան (USAID) հայաստանեան առաքելութեան տնօրէն Տեպորա Կրիստըրը:

Ըստ կառավարութեան պաշտօնական կայքէջին, Կարէն Կարապետեան եւ Ռիչըրտ Միլս քննարկած են հայ-ամերիկեան յարաբերութիւններու օրակարգին վերաբերող շարք մը հարցեր: Զրուցակիցները նախ եւ առաջ անդրադարձած են կաշառակերութեան դէմ պայքարի բնագաւառին մէջ համագործակցութեան, քննարկած ընթացիկ աշխատանքներն ու յետագայ կատարելիքները:

Վարչապետը նշած է, որ կառավարութիւնը, իր ծրագրերին համապատասխան, կը շարունակէ կաշառակերութեան դէմ պայքարի ոլորտին մէջ իրավիճակի բարելաւման հետեւողական քաղաքականութիւնը 3 հիմնական ուղղութեամբ: Կաշառակերութեան վտանգի նուազեցում, օրինաչափականօրէն սղորակման դաշտի արդիականացում ու կատարելագործում եւ կաշառակերութեան դէմ պայքարի խորհուրդի աշխոյժ աշխատանք:

Այս համապատկերին մէջ Կարէն Կարապետեան կարեւորած է ԱՄՆ օժանդակութիւնը Հայաստանի կառավարութեան քայլերուն, որ կրնայ դրսեւորուել ե՛ւ կաշառակերութեան դէմ պայքարի խորհուրդի գործունէութեան, ե՛ւ միւս ուղղութիւններով իրականացուող բարեփոխումներուն աջակցութեան տեսքով:

Դեսպանը ողջունած է կաշա-

ռակերութեան դէմ պայքարին եւ գործարարութեամբ զբաղելու միջավայրի բարելաւման ուղղուած վարչապետին ջանքերը, որոնք նպաստած են Հայաստանի նկատմամբ ամերիկեան ներդրողներու հետաքրքրութեան աճին:

Ան նշած է, որ վերջին 8-10 ամսուայ ընթացքին Հայաստանի մէջ գործող ամերիկեան ընկերութիւններէն դրական ազդակներ ստացած է յատկապէս մաքսային ոլորտին մէջ կատարուող բարեփոխումներու առնչութեամբ:

Ռիչըրտ Միլս վերահաստատած է ԱՄՆ պատրաստակամութիւնը, շարունակելու աջակցութիւնը Հայաստանի կառավարութեան կաշառակերութեան դէմ պայքարի գործին մէջ, եւ այժմ կը քննարկուի այդ նպատակով յատկացուող միջոցներու վերադարձումն եւ օժանդակութեան առաւել արդիւնաւէտ ուղին գտնելու հարցը:

«Հանդիպմանն անդրադարձ է եղել նաեւ 2 տարի առաջ մեկնարկած «Իմ Հայաստան. մշակութային զբօսաշրջութիւնը Հայաստանում» ծրագրի ընթացքին: Այն մշակուել է Հայաստանի կառավարութեան, ԱՄՆ ՄԶԳ եւ մշակութի պահպանման ասպարէզում յայտնի Մմիթսոնեան ինսթիթուտի համագործակցութեան շրջանակում եւ միտուած է ազգային մշակութի պահպանմանը՝ Հայաստանում մշակութային զբօսաշրջութեան զարգացման միջոցով», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

Կողմերը միտքեր փոխանակած են նաեւ ՀՀ-ԱՄՆ համագործակցութեան առնչուող շարք մը այլ հարցերու շուրջ:

Միոսկի Խուճի Նախկին Համանախագահները Կողմերուն Մօտ Փոխզիջումներու եւ Համաձայնութեան Կամք Չեն Տեսներ

Հարաբարեան խնդիրը սառեցուած է, աւելին, վերջին տասնամեակին կողմերու դիրքորոշումներն աւելի կարծրացած են, տարածաշրջան աւելի ռազմականացուած դարձած է, աճեցնելով պատերազմի վերսկսման հաւանականութիւնը, երէկ ԱՄՆ Քոնկրէսի Հէյնրիկեան յանձնաժողովին մէջ յայտարարած է ԵԱՀԿ Միոսկի խումբի նախկին համանախագահ Քերի Քաւանո:

«Մտահոգութիւն կայ, որ ոչ միայն դիտաւորեալ, այլև պատահականօրէն իրականացուած քայլերը կրնան յանգեցնել ռազմական հակամարտութեան: Մեծ երեւակայութիւն հարկաւոր է, պատկերացնելու համար իրավիճակ մը, երբ շփման գիծի երկայնքով հնարաւոր զարգացումները հեշտութեամբ կրնան վերահսկողութենէ դուրս գալ, հաշուի առնելով կողմերուն մօտ գէնքի կուտակումներու աճը եւ շփման գիծի ու Հայաստան-Ատրպէյճան սահմանի երկայնքով տեղակայուած զինատեսակներու որակական փոփոխութիւնները», - նշած է ան:

«Շփման գիծի վրայ իրավիճակի սրացման հաւանականութիւնը մեծցած է աւելի, քան երբեք», - իր հերթին յայտարարած է Քաւանոյն ետք Միոսկի խումբ եկած ձէյմս Ուորլիք, հաստատելով. - «Երբ ես 2013 թուականին ստանձնեցի համանախագահի պաշտօնը, իրավիճակը Շփման գիծի վրայ անկայուն էր եւ վտանգաւոր, եւ ցաւօք, անցեալ հինգ տարուան ընթացքին շատ քիչ բան փոխուած է»:

«Այն ժամանակ անհրաժեշտ

էր լուծել դիպուկահարներու հարցը, որոնք, հակառակ հրադարարի մասին համաձայնագրին, կանոնաւոր կերպով կը կրակէին շփման գիծի երկայնքով, որուն հետեւանքով գոհեր ու վիրաւորներ կ'իջնային», - չիշել տուած է նախկին համանախագահը, շարունակելով. - «Այսօր շփման գիծի երկայնքով տեղակայուած է ծանր զինտեխնիկա, այդ թուին՝ ականանետեր, նռնականետեր եւ հրետանի: Անոնց կիրառման հետեւանքով աճած է զոհերու թիւը, այդ թուին՝ խաղաղ բնակչութեան շրջանին: Միալեւու եւ իրավիճակի սրացման հասնելու հաւանականութիւնը մեծցած է աւելի, քան երբեք: Մենք պէտք է կրկնապատկենք ջանքերը, յարատեւ խաղաղութիւն հաստատելու համար»:

«Թէեւ մենք չենք զիտեր ժնեւի մէջ կայացած վերջին երկխօսութեան մանրամասները, սակայն տպաւորութիւնն այն է, որ այստեղ այս հանգրուանին քաղաքական կամքը բացակայած է, կարգաւորման ուղղութեամբ առաջընթաց արձանագրելու համար: Անշուշտ, մենք կ'ողջունենք նման դէմ առ դէմ հանդիպումները, սակայն պէտք է նշենք, որ առանց առաջընթացի եւ բովանդակալից քննարկումներու, անոնք կրնան հիասթափութիւն առաջացնել», - յայտնած է Ուորլիք:

«Եթէ կողմերն անկարող են վստահութիւնն ամրապնդող քայլեր ձեռնարկել, հաւանաբար պէտք է պայմանաւորուածութիւններ ձեռք բերել այլոց միջոց», - առաջարկած է Քերի Քաւանո:

GARNI

Nourish your hair with natural products

www.GarniUSA.com
Pasadena, CA 91102, USA

NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
ghdepoyan@gmail.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՍԻՊԻԼԻ ԵՒ ԱՆՏՐԻԻ ՀԻԱՍՔԱՆՉ ՀԱՄԵՐԳԸ



Մշակույթի ամսուան առիթով գեղեցիկ գուգադիպուծիւն մը եղաւ Անտրէի եւ Սիպիլի բացառիկ համերգը, Լոս Անճելոսի Ուիլլըր Իպէլ թատերասահին մէջ:

Արդարեւ, Հոկտեմբերի 22ին, 2017 սոյն միջոցառումը կազմակերպուած էր Պոլսահայ Միութեան եւ Համագրային Մշակութային Ընկերակցութեան համատեղ ձեռնարկով:

Աւելի քան հազար երաժշտասէրներու ներկայութեամբ գործադրուեցաւ գեղարուեստական բաւականին ճոխ յայտագիր մը: Օրուան գլխաւոր աստղն էր հայ երգի ականաւոր ներկայացուցիչներէն Սիպիլ, որ իր առաջին իսկ երգով կրցաւ գրաւել ունկնդիրներուն սիրտը, քանի որ իր մէջ առկայ էր իւրաքանչիւր հաղորդականութիւն, ընդլուգուած կատարողական ինքնուրոյն մեկնաբանութեամբ:

Armenian Music Awards-ի «Կախարդական Ձայն» մրցանակին արժանացած պոլսահայ երգչուհին՝ հանրութեան ներկայացաւ հայկական երգերու հարուստ պաշարով մը, «Նամակ» «Տարիներ Տարիներ», «Տեսնեմ Անին», «Ատանայի Ողբը», «Վանայ Լճին», «Բարի Արագիլ» եւ այլն:

Նշենք որ Սիպիլ Փէթթորոսօղլուն մօտէն տեղեակ ըլլալով նաեւ միջազգային հարթակին վրայ ճանաչում գտած երգերուն, որպէս նմուշ գեղեցկօրէն մեկնաբանեց նաեւ Time To Say Goodbye երգը, արժանանալով ներկաներու որոտընդոստ երկար ծափահարութեանց եւ կրկին երգուեցաւ ընդառաջելով հանդիսականներու վանկարկումներուն:

Աբտարակոյս օրուան երկրորդ փալլուն աստղն էր Հայաստանի եւ Սփիւռքի համար հանրածանօթ երգիչ Անտրէ Յովաննիսեանը: Ան մրցանակակիր է EUROUVISON-էն եւ իր հիանալի կատարումներով

ամենուրեք գրաւած է հայ հանդիսատեսի սիրտն ու հոգին: Կիրակի օրուան համերգին Անտրէն առաւելաբար ելոյթ ունեցաւ Սիպիլի հետ միատեղ կատարուած գուգերգերով («Կարմիր Ծաղիկ», «Մէր», «Ով սիրուն սիրուն», «Գետաշէն»): Բացառիկ կատարում մըն էր Անտրէի «Երախուշտա» ժողովրդային երգը: Ան արահէն ներս իւրաքանչիւր երեւոյթ մը պարզեց: Խօսափողը ձեռքին, բեմահարթակէն վար իջնելով մտաւ հանդիսականներուն մէջ ու կենսախինդ նոր մթնոլորտ մը ստեղծեց: Իրապէս դիւթիչ ու միաժամանակ հմայիչ էին գոյգ երգիչներու համատեղ կատարումները, որոնք լի էին ապրումով յուզականութեամբ, բեմական տպաւորիչ արտայայտութիւններով ու գեղարուեստական բարձր մակարդակի մեկնաբանութիւններով:

Վերոյիշեալ կատարումները «ճաղկեցնողներ» էին Ռոզ եւ Ալեք Փիլիպոս Վարժարանի միջնակարգի երգչախումբն ու Համագրայինի եւ Լիլիա Մարգարեանի պարախումբը, որոնք պարբերաբար իրենց մասնակցութեամբ (երգ ու պար) փայլքը կ'աւելցնէին թէ մեներգներուն եւ թէ գուգերգներուն: Այս բոլորին վրայ պէտք է աւելցնել նաեւ փոքր նուագախումբի որոշ բաժիններու մէջ տեղին մասնակցութիւնը՝ Ատիոմ Մանուկեան (թաւ ջութակ), Արագաս Աբրամեան (կիթառ) եւ Վահան Բզնունի (դաշնամուր), որոնք համահունչ էին Սիպիլի եւ Անտրէի երգերուն:

Երեկոյթի խանդավառութիւնն իր գագաթնակէտին հասաւ յայտագրի աւարտին եղած գոյգ խմբերգներուն («Մեր Լեզուն եւ «Գետաշէն») կատարումներով, որոնց իրենց մասնակցութիւնը բերին երգչախումբը, նուագախումբը,

ՀԱՆՐԱՅԱՅՏ ԶՈՒԹԱԿԱՅԱՐ ՆԻԿՈԼԱՅ ՄԱԴՈՅԵԱՆ ԿԻՆԷՍԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ



Մեր ժամանակներու լաւագոյն ջութակարներէն Նիկոլայ Մադոյեանի բազմաթիւ միջազգային հեղինակաւոր մրցանակներուն աւելցած է եւս մէկը՝ ան դարձած է Կինէսի համաշխարհային մրցանակակիր:

Օրերս Կինէսի մրցանակներու միջազգային գրասենեակէն ստացուած է անոր հաւաստագիրը: Հեղինակաւոր այդ տիտղոսը Մադոյեանին տրուած է աննախադէպ երկար տեւողութեամբ նուագելուն համար: 2017 թուականի Փետրուարի 11-12-ին Երեւանի Կոմիտասի անուան կամերային երաժշտութեան տան մէջ ան անընդմէջ նուագած է 33 ժամ 2 վայրկեան եւ 41 երկվայրկեան, այդ ընթացքին ներկայացնելով համաշխարհային երաժշտական զանձարանի ջութակի համար գրուած լաւագոյն ու կատարման առումով տեխնիկապէս շատ բարդ գործեր: Այսօր հրաւիրուած ասուլիսին Նիկոլայ Մադոյեան շեշտած է. «Ջութակն իմ տարերքն է, ես աշխատում եմ չթողնել ջութակի որեւէ չնուագած տարածք: Այս պատմական ռեքորտը ես արեցի յանուն Հայաստանի, յանուն մեր մշակույթի: Այն նուիրում եմ արցախեան պատերազմի անմահ հերոսների յիշատակին»:

Այժմ արդէն Կինէսի մրցանակակիր ջութակահարին խօսքով, իր առաջնահերթ նպատակը եղած է ոչ այնքան եւ ոչ միայն տեխնիկական կատարելութեան հասնիլը, այլ այդ 33 ժամերու ընթացքին ունկնդիրին բարձագոյն գեղագիտական հաճոյք պատճառելը: «Ես ընտրեցի 59 ստեղծագործութիւն-

ներ, տարբեր դարաշրջանների եւ ոճերի, ներառեալ չորս հայկական ստեղծագործութիւններ: Ըստ Կինէսի կանոնների, ես չորս ժամուայ ընթացքում իրաւունք չունէի կրկնել նոյն ստեղծագործութիւնը: 59 գործերից բաղկացած ցիկը կրկնուած էր մօտ ութ անգամ»,- պատմած է Նիկոլայ Մադոյեան:

Հանրայայտ ջութակահարը հիւրախաղերով հանդէս եկած է աշխարհի լաւագոյն բեմահարթակներու վրայ, ան համաշխարհային երաժշտական հանրութեան յայտնի է իր բացառիկ կատարումներով: Օրինակ, Իտալիոյ, Ինչպէս նաեւ քանի մը այլ երկիրներու մէջ ան մէկ համերգի ընթացքին նուագած է Փականինիի 24 քափրիչչօները: Այլ պարագաներու ան մէկ համերգի ընթացքին նուագած է Փականինիի 6 քոնսերթները. «Դա պատմական իրադարձութիւն էր, առաջին անգամ էին Փականինիի բոլոր քոնսերթները նուագուած մէկ համերգի ընթացքում»:

Պ. Մենք կը բեմադրենք մի քանի հիանալի մանկական բալետներ: Առաջիկայում նախատեսուած է բեմադրել կոմպոզիտոր Կարէն Խաչատրեանի «Չիպոլինոն», որը անհայտ պատճառներով երբեք չէ ներկայացուել Երեւանում: Այս հրաշալի բալետը նախկին Սովետական Միութեան ամենայայտնի թատրոնների խաղացանկի հիմնական մասն էր հանդիսանում (Մոսկուայի Մեծ թատրոնում, Սանկտ-Պետերբուրգի Միխայիլովսկի թատրոնում, Նովոսիբիրսկի օպերայի եւ բալետի թատրոնում եւ Կիեւի պետական թատրոնում): Ես նաեւ Մոսկուայից բազմաթիւ ստեղծագործութիւններ եմ բերում, ինչպիսիք են՝ մրցանակակիր Ժ. Մանէի «Մանոն» հռչակաւոր օպերան Անդրես Ժազարսի բեմադրութեամբ Մոսկուայի Ստանիսլավսկու եւ Նեմիրիվիչ-Պանչենկո թատրոնից: Սա նոր ստեղծագործութիւն է, որի պրեմիերան տեղի է ունեցել 2016թ-ի Դեկտեմբերին, եւ մեր հիանալի տենոր Լիպարիտ Աւետիսեանը, ով ելուցիւթ էր ունեցել այդ օպերայում մի քանի ամիս առաջ Մոսկուայում ստացաւ «Ոսկե Դիմակ» տարուայ մրցանակը: Բացի Մանոն ստեղծագոր-

ծութիւնից մենք կը բեմադրենք Պուչչինիի հիանալի Տրիպտիխի (եռեակ օպերաներ մեկ երեկոյի ընթացքում՝ «Ջիաննի Սկիկին», «Քուլլր Անժելիկան» եւ «Իլ Տաբարոն»), ինչպէս նաեւ կվերականգնվի մի շարք ստեղծագործութիւններ, որոնցից առաջիկայում Գ. Դոնիցետտիի «Պոդիկտոս» օպերայի վերականգնումն է:

Հ. Դուք նախատեսում էք առաջարկել նաեւ յատուկ օպերային ներկայացումներ Հայաստանի տարբեր մարզերում: Ի՞նչու էք կարեւոր համարում օպերան տանել երկրի հեռաւոր մարզեր:

Պ. Այս տարուայ Յունիսին մենք յաջողութեամբ ներկայացրինք Ա. Տիգրանեանի «Անուշ» օպերան Հայաստանի մարզերում: Դա շատ յաջողուած փորձ էր եւ մենք յուսով ենք, որ այն կը կրի շարունակական բնույթ: Մեր նպատակն է օպերան տանել ամբողջ երկրով, քանի որ մենք միակ օպերային թատրոնն ենք աշխարհում որը ներկայացնում է այս հայկական գլոբալիզացիաները: Մենք փորձում ենք գտնել ուղիներ բա-

լետային ներկայացումներից՝ ինչպիսիք են «Գայեանեն» եւ «Սպարտակը» նոյնպէս ներկայացնել մարզերում եւ դրսում:


Հ. 2018թ-ի ծրագրերում նաեւ դուք մտադրութիւն եք հայտնել Երեւանի օպերային թատրոնի ծաւալուն վերանորոգման աշխատանքներ տանել, ինչպէս նաեւ հիմնել թանգարան եւ գրադարան շէնքի ներսում: Նախ արդիականացման մասին ի՞նչ է այն ներառելու:

Պ. Մենք իրականում սկսել ենք վերանորոգման մի մասը՝ մասնավորապէս երկրորդ յարկի ձեւաւորակ մանրաշտակը: Մենք նաեւ սկսել ենք արխիւի ուսումնասիրութեան հսկայական աշխատանքները, որպէսզի պատրաստենք անհրաժեշտ ամէն ինչ թանգարանի համար, որը նախատեսում եմ բացել միւս տարի: Թատրոնը հիմնադրուել է 1933թ-ին եւ շատ բարելաւումների կարիք ունի, որ պէտք է անենք: Ես հիմա ամբողջութեամբ չեմ թուարկի, բայց վստահ եմ, որ գալիք մի քանի ամիսներում մարդիկ կը տեսնեն տարբերութիւնը:

Հ. Որո՞նք կը լինեն Երեւանի օպերային թատրոնի ներսում գտնվող ապագա թանգարանի եւ գրադարանի գլխաւոր առաւելութիւնները:

Պ. Իհարկէ ես շարունակում եմ

1948 ԹՈՒՎԿԱՆ. «ՊՈՐԵՂԱ» ՆԱԻՌԻՆ ՎՐԱՅ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՅԻՆ ՄԱՍԻՆ... ԵՒ ՈՉ ՄԻԱՅՆ



ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

«Ալեքսանդրիայից Բաթումի նաւահանգիստ եգիպտահայ երկրորդ կարաւանին բերող «Պորեղա» նաւի վրայ 1948-ի սեպտեմբեր 1-ին հրդեհ բռնկեց: Սեպտեմբերի 14-ին ներգաղթի անյապաղ դադարեցում է»:* Պէյրուսի հայահոծ շրջաններուն մէջ ապրող հայերէն շատ շատերը հաւանաբար լսած են «Պորեղա» շոգենաւուն մասին: Եգիպտոսի Աղէքսանդրիայէն դէպի Սորբոն վրաստան հայեր տեղափոխող այդ նաւուն պատմութիւնը պատմական կարեւոր փուլի մը փակման նախակիցքն էր: Խօսքը անշուշտ հայրենական ներգաղթի մասին է, որ ընթացք կ'առնէր 21 նոյեմբեր 1945-ին եւ պաշտօնապէս կ'աւարտէր 1948-ին: Ժիշդ է, որ Սորբոն վրաստան կողմէ ամբողջութեամբ եւ ներգաղթը դադարեցնելու վերաբերեալ վճիռը վերջնական պատուար մը չէր դառնար այն հայերուն դիմաց, որոնք իրենց ընտանեկան պարագաներուն դէպի Սովետական Հայաստան տեղափոխուած էին ետք ալ շատ յաճախ լռելեացի վճռած էին Հայաստան մեկնել: Սակայն ընդհանուր առումով ներգաղթի փուլը իր վերջին շունչերը կը փչէր:

Սորբոն վրաստան երկրի տէրերը եւ մասնաւորապէս ԽՍՀՄ թիւ մէկ ղեկավար Ժողով Ստալին իմանալէ ետք նաւուն վրայ ծագած հրդեհին լուրը, արագօրէն կը հեռագրէր այդ օրերուն Ժողովխորհրդի նախագահ Գէորգ Մալեհովիին եւ խստաճ յանձնարարական մը տալէ բացի, կը շեշտադէտէր, որ «Պորեղա» նաւուն կան «խառնակիչ» տարրեր, որոնք կը պատրաստուէին խափանարարական արարքներ կատարել Հայաստանի մէջ: Այդ անհիմն տեսութեան վրայ հիմնուելով Սորբոն վրայ իշխանութիւններուն մտայղածումը հանդիսացող ներգաղթի դադարեցումը կը տապալուէր, իր ետին ձգելով տարբեր տեսակի հիմնախնդիրներ, մասնաւորապէս անոնց համար, որոնք Հայաստան գալու մարմաջէն մղուած կը հրաժարէին այն երկիրներու հպատակութիւնէն, ուր մինչ այդ ապրած էին եւ ճիշդ տարած աճի համեմատաբար «տանելի» կեանք մը կերտել:

Չմոռնանք, որ այդ սերունդը, որ կ'ապրէր Եգիպտոսի, Սուրբոն, Լիբանանի, Իրաքի, Յունաստանի եւ նոյնիսկ Ֆրանսայի մէջ կը պատկանէր այն խաւին, որոնց

անմիջական պարագաները հրաշքով եւ տարբեր ճամբաներով ճողորմած էին Օսմանեան կայսրութեան եւթարանէն ու յայտնուած էին, իրենց համար բոլորովին նոր եւ անծանօթ միջավայրի մը մէջ: Խորքին մէջ ինչն էր այն ուժը, որ կը ստիպէր այդ մարդոց, որ իրենց ետին թողնէին իրենց նորաբոյս իրենց բոյները եւ նետուելու դէպի անյայտութիւն, որուն մասին ալ շատ շատեր «սպասուած դրախտ», «խորհրդային երկիր» կամ այլ հմայիչ անուանումներ կու տային:

Այդ օրերու հայութիւնը կ'ապրէր խմորումի վիճակ մը, որուն մէջ ալ քաղաքական ինքնորոշման, կարծիքի, տեսակէտի, մտեցումի, ինքնութեան որոնումի եւ նման տանտեսակ հարցադրումներու առիթ կամ տեղ չկար:

Մահէն ու աքսորէն փրկուած հայրերը խումբեր, որոնք բնական մղումով մը իրենց փրկութեան լաստը պիտի համարէին այդ օրերու Սորբոն վրաստանը, որ նաեւ հայրենադարձութեան դէմ եղող հատուածին համար ալ կը համարուէր «Կարմիր Հայաստան» մը, որ պատուած էր «երկաթէ վարագոյր»ով: Մտեցումներու այս տարբերութեան հետեւանքով հայութիւնը կը բաժնուէր երկու կէսի:

Անոնք, որոնք ամէն նկատառում մէկը ի դրած կը կառչէին Հայաստան երթալու բուռն եւ անզիջող փափաքին եւ անոնք, որոնք զգուշաւոր հայեացքով կը դիտէին սպասուող զարգացումներն ու չէին վարանիր տարբեր առիթներով խօսիլ ու պատճառաբանել իրենց վերապահութիւնները:

Ինչպէս վերը նշեցի, հայրենադարձութիւնը կը տեսէր ընդամէնը 3 տարի եւ պաշտօնապէս կը դադարեցուէր 1948 թուականին: Անկէ ետք սակայն եւ մինչեւ 1949 թուական, տարբեր երկիրներէ հազարաւոր հայեր կը փութային Հայաստան տեղափոխուելու:

Օրինակ 1946 թուականին Լիբանանէն, Սուրբոնէն, Յունաստանէն, Պուլկարիայէն եւ Իրանէն Հայաստան կը հասնէին 50.928 հայեր, իսկ հայրենադարձներու վերջին կարաւանը Հայաստան կը հասնէր Միացեալ Նահանգներէն ընդամէնը 162 հայրենադարձներով եւ կը դառնար վերջին կարաւանը «ծրագրուած» հայրենադարձութեան տոմարին մէջ:

Շատ գրուած ու խօսուած է հայրենադարձութեան մասին: Լոյս տեսած են հատորներ, պրակներ եւ Տիգրան Պասկեւիչեանի ու Արա

Շիրինեանի համահեղինակութեամբ նկարահանուած ու ցուցադրուած են երեք տեսաֆիլմեր, որոնք լոյս կը սփռեն այս խիստ կարեւոր եւ նոյնիսկ այժմեական թեմային վրայ:

Այժմեական, որովհետեւ ցայսօր ալ Հայաստանի Հանրապետութեան համար առաջին խնդիրը մարդագրական աճի պակասի, արտագաղթի եւ բնակչութեան թուի նուազման խնդիրն է:

Խորհրդային Միութեան «վերելք»ի հանգրուանին եղած ու դէպի Սովետական Հայաստան մեծաթիւ հայերու տունդարձը ապահոված հայրենադարձութիւնը այսօր մեզի կը ներկայանայ, որպէս պատմական փուլի մը կարեւոր «իրագործումներէն» մին:

Ժիշդ է, որ այս թեմային վերաբերեալ հայութեան տեսակէտները նոյն հարթութեան վրայ չեն, բայց եւ այնպէս գաղտնիք ալ չէ, որ հակառակ ամենատարբեր վնասներուն եւ անհատական մակարդակի վրայ հայրենադարձներէն շատերուն տրուած «հարուածներուն», հայրենադարձութիւնը եղաւ օգտակար դրոյթ մը:



Որո՞ւ կը պատկանէր աքսորի ու մահուան ճանապարհներէն սփիւռքացած հայութիւնը Հայաստան փոխադրելու ծրագիրը իրականացնելու այդ հզոր միտքը տակաւին յստակ չէ, սակայն կայ նաեւ կարծիք, որ յատկապէս այդ հանգրուանին (մինչեւ 1948) Սորբոն վրաստանի ղեկավարներուն եւ Սովետական Հայաստանի ղեկավարութեան շահերը կը նոյնանային:

Այսպէս եթէ կրէմլին ու Ստալինին համար կարեւոր էր հայրենադարձութեան հետեւանքով ստեղծուած դրական «փրփականտ»ը ներկայացնել, ապա Հայաստանի ղեկավարներուն համար ալ շատ տեղին, պիտանի եւ օգտակար էր մարդագրական աճի, նոր մշակոյթով, նոր ընկալումներով եւ «դուրսի աշխարհ»ը տեսած հայերուն իրենց պակասական երկիրը «վերադառնալ»ը:

Ամէնօրեայ լրատուութեան եւ արագ լրահոսի ճիրաններուն մէջ «բռնուած» հայ ընթերցողը բնականաբար ժամանակի խնդիր ունի: Ու հասկնալի պատճառներով ալ մեզմէ շատ-շատերուն համար մօտիկ անցեալի մեր պատմութեան դասերը կը մնան լուսանցքի վրայ: Կ'ապրինք բաւական արագ ու թմով եւ յաճախ ալ անսպասելի ցնցումներու ենթակայ բաւականին բարդ ժամանակաշրջան մը:

Հայութեան քանի տոկոսը կը հաւատայ, որ այսօրուան Հայաստանը իր վերջին հանգրուանն է, պարզ չէ, սակայն յստակ սկսած

է դառնալ, որ յատկապէս Միջին Արեւելքի մէջ գրանցուող զարգացումներէն ետք ու յատկապէս Սուրբոնի բզիկ-բզիկ ըրած պատերազմէն յետոյ, Հայաստանը սկսած է ունենալ այլ «գրաւուցում»:

Առնուած «Ես Հայաստան կ'ուզեմ ապրիլ» կամ «Հայաստան պիտի տեղափոխուինք» բառերը դադարած են, որպէս թապու բառեր ներկայացող դրոյթներ ըլլալէ: Սփիւռքի տարբեր շրջաններու մէջ «հաստատուած» հայրերներ սկսած են ազատօրէն խօսիլ, մտածել ու մանաւանդ ... երազել այդ վերադարձին մասին:

Ժիշդ է նաեւ, որ այս նոր «ծլարձակուող» մտեցումին դէմ կան ու կը գործեն «յայտնի» եւ «անյայտ» ուժեր, որոնք հանրութեան կը փորձեն ներկայանալ, որպէս գաղութի մը ապագայով մտահոգ մարմիններ: Ու անոնք եւս յարգելի են:

Դէպի Հայաստան ձգուածի, դէպի Հայաստան մեկնումի պայքարը յաւիտեական բնոյթ ունի: Խորքին մէջ հայ մարդու իր սեփական հողին վրայ ապրելու մղումը դա-

րաւոր պայքարէն դուրս եկած անկասելի, անմեռ ուժի մը սլաքումն է: Ու գաղտնիք ալ չէ, որ այսօր աշխարհի վրայ չկայ երկրորդ հայ մը, որ կասկածի տակ կը դնէ այսօրուան Հայաստանին, իբրեւ հայուն վախճանական տեղ, բնակավայր ու տուն ըլլալու համագամանքը: Այն գետինը ի վերջոյ, ուրկէ կը բխին հայութեան բոլոր ապագայի տեսիլները:

Այս բոլորէն բացի ու այսօրուան հանգամանքներու լոյսին տակ նաեւ հարկ է հաւատալ, հարկ է տրուել այն մտեցուման, որ այսօրուան սպասուած հայրենադարձութիւնը այս անգամ պիտի կատարուի, ոչ թէ Գրէմլի «կարմիր որոշում»ով, այլ ամբողջ հայութեան կամքով ու փափաքով:

1948-ին Աղէքսանդրիայէն դէպի Սորբոն վրաստանի Պաթում նաւահանգիստը հասնող եւ հայրենադարձներ իրենց Սորբոն վրայ երկիրը փոխադրող նաւուն վրայ հրդեհ մը կը ծագի:

Հրդեհը, որուն պատճառները ցարդ ալ կը շարունակեն մնալ անյայտ, պատճառ կը դառնայ, որ Սովետական կարգերու «ահեղ» առաջնորդին՝ Ստալինին կարմիր կնիքով ընթացք առած հայրենադարձութիւնը դադարի, վերջանայ:

Այսօր ստալիններ չկան, ու չկան նաեւ մեզի Հայաստանէն հեռացնող, Հայաստանէն օտարող կարմիր եւ ոչ կարմիր ուժեր եւ այս բոլորը դրական սլաքներ են ուղղուած մեր սիրելի սփիւռքին: «Արարատ»/Պէյրուս

ԹՈՐՈՆԹՕ

«ԲԱՐԵԼ» ԿԵԴՐՈՆԻ ՀՊԱՐՏԱՌԻԹ ԲԱՅՈՒՍԸ



ՊԵՏԹԻ ՓԱՆՈՍԵԱՆ

Տեսլականները շօշափելի իրականություններ վերածելը կ'ենթադրել անխախտ հաւատք, յարատեւ ջանք ու անսակարկ նուիրում, իսկ երբ այդ տեսլականին առաջնահերթ նպատակներէն մէկն է մշակոյթի ծիրէն ներս ծառայելու նպատակը Հայրենիք-Սփիւռք կապի ամրապնդման, քայլ մը առաջ անցնելով՝ նոյն այդ տեսլականը կը վերածուի վսեմ առաքելութեան: Ըստ արժանւոյն, տեղին է յիշել, թէ մշակութային, կրթական, ընկերային ու մարդասիրական ոլորտները ընդգրկող վերոյիշեալ տեսլական-առաքելութիւնը, արգասիքն է կեդրոնի հիմնադիր եւ նախագահ՝ Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի եւ խումբ մը երիտասարդ անդամներու մտայնադասման:

Ահա այսպիսի առաքելութեան մը մեկնարկին ակնատեսը եղաւ Թորոնթոյի Ս. Երրորդու թիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ հովանիին ներքոյ տեղի ունեցաւ Գանատահայ Համայնքի Ծառայութիւններու «Բարել» կեդրոնի հանդիսաւոր բացումը, հովանաւորութեամբ՝ Գանատահայց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի:

Նախքան հանդիսութիւնը, եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ ձեռամբ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Գանատահայց Թեմի Փոխառաջնորդ՝ Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեանի: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ «Բարել» կեդրոնի վարչութեան անդամ-անդամուհիներու, ինչպէս նաեւ կամուրջներու օրհնութիւնը, որու աւարտին իր պատգամը փոխանցեց Գանատահայց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան:

Այնուհետեւ, դեսպան՝ տիար Լեւոն Մարտիրոսեան, ընթերցեց ՀՀ Վսեմաշուք Նախագահ Տիար Սերժ Սարգսեանի հրամանագիրը ուղղուած՝ բրշ. Պերճ Սրկ. Լույսէճեանին՝ հայրենիքին, Արցախին եւ Հայց Բանակին մատուցած իր ծառայութիւններուն եւ ՀՀ Երախտագիտութեան մետալով պարգեւատրուածին առթիւ, որմէ ետք երախտիքի իր խօսքերու աւարտին յանձնեց շքանշանը:

«Բարել» կեդրոնի բացման հանդիսութեան պատուոյ հիւրերն էին՝ Նորին Վսեմութիւն Տիար Լեւոն Մարտիրոսեան՝ ՀՀ Արտակարգ եւ Լիազոր Դեսպան, Մեծարգոյ Տիար Ճոն Մըքքէյ (Scarborough Guildwood) Դաշնակցային Խորհր-

դարանի անդամ, Վսեմաշուք Միթգի Հանթեր՝ Օնթարիոյի Կրթութեան Նախարարուհի, Մեծարգոյ Տիար Ճոն Թորի՝ Թորոնթոյի քաղաքապետ, Մեծարգոյ Տիար Պերճ Րիչըրտ Սվազըլեան՝ ՀՀ Պատուոյ Հիւպատոս (Օնթարիո)-ի մէջ, Տիար Սասուն Յովհաննիսյան՝ Երրորդ Քարտուղար Հիւպատոսական Հարցերով, Տիար Խորեն Մարդոյան, Հայաստանի Զարգացման Հիմնադրամի ներկայացուցիչ Գանատայի մէջ, Տիար Արիս Պապիկեան (Scarborough-Agincourt) Յառաջընթաց-Պահպանողական (Progressive-Conservative) կուսակցութեան Թեկնածու, Տիկին Աբէթ Ալբայ՝ Թեմական Խորհուրդի ատենապետուհի, Տիար Օհան Օհաննեսեան՝ Սբ. Երրորդու թիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ, ինչպէս նաեւ՝ Թորոնթոյի Հայ Համայնքի եկեղեցական, քաղաքական, բարեփոխական, կրթական եւ մշակութային կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ:

Ծխական Խորհուրդի ժողովասենեակէն ներս՝ պատուոյ հիւրերուն հայկական աւանդական հիւրասիրութեան մասնակցութեանէն ետք, տեղի ունեցաւ «Բարել» կեդրոնի գրասենեակի բացման ժապաւէնի հատումը, գլխաւոր նուիրատու՝ էլիզապէթ Տիրատուրի ներկայութեամբ, ի չիշատակ եղբօր եւ ծնողներուն՝ Կրէյլըրի Տիրատուրի եւ Սուրէն եւ Ազնիւ Տիրատուրի: Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան հիւրերուն բացատրեց կեդրոնի տարբերանշանի (logo) ի մաստը եւ ամփոփ ձեւով ներկայացուց վերանորոգման աշխատանքի ընթացքը, յատուկ շնորհակալութեան խօսք փոխանցելով «Բարել» կեդրոնի վարչական անդամներուն եւ ձեռնարկին իրենց անսակարկ ծառայութեամբ նպատած կամուրջներուն:

Հիւրերը ապա ուղղուեցան «Մակարոս Արթինեան» սրահ, ուր մեծ թիւով համակիրներ, անդամներ, կամաւոր ծառայողներ եւ հրաւիրեալներ, պատշաճ հիւրասիրութեան մասնակցելէ ետք, իրենց տեղերը գրաւած էին: Ծափողջիւններու ընկերակցութեամբ յարգարժան հիւրերը գրաւեցին իրենց տեղերը, վայելելու համար նախատեսուած գեղարուեստական յայտագիրը: Գանատայի եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութենէն ետք, սկիզբ առաւ գեղարուեստական յայտագիրը Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Ազգ. Շարեթօրեայ վարժարանի 6-7-8-րդ կարգերու աշակերտներու հայրենասիրական,

ողբնչոց երգերով, դեկավարութեամբ՝ վարժարանէն ներս երաժշտութեան դասատու՝ Նաթա Նավասարդյանի:

Բարի գալուստի եւ բացման խօսքերով հանդէս եկան «Բարել» կեդրոնի յանձնախումբի ատենապետ՝ Տիար Լեւոն Գալթաքեան եւ ատենադպրուհի՝ Օրդ. Սառա Շահմուրադյան, որոնք յատուկ շնորհակալական խօսք ուղղեցին ձեռնարկի յաջողութեան նպատած բոլոր անհատներուն, ի մասնաւորի՝ նուիրատու էլիզապէթ Տիրատուրին. ապա ներկայացուցին «Բարել» յանձնախումբի անդամները իրենց ստանձնած պաշտօններով: Ներկաները մեծ հաճոյքով հետեւեցան «Բարել» կեդրոնի գործունէութիւնը բնորոշող տեսերիզի ցուցադրութեան, որմէ ետք «Կինտոններու Պար»ով ելույթ ունեցաւ «Սասուն» պարախումբը արժանանալով հիւրերու ջերմ ծափահարութեան:

Բեմ հրաւիրուեցաւ Արժ. Տէր Զարեհ Ա. Քհնյ. Զարգարեան, որ իր խօսքի ընթացքին շեշտը դրաւ Հայ Եկեղեցւոյ ստանձնած դերին, նշելով, որ «Հայ Եկեղեցին դարեր շարունակ եղած է ո՛չ միայն քրիստոնէական հաւատքի, այլ նաեւ՝ Հայոց լեզուի, գրականութեան, մշակոյթի եւ ազգային արժէքներու պահպանման ու տարածողը: Հետեւաբար, Սբ. Երրորդու թիւն եկեղեցւոյ հովանիին ներքոյ ծնունդ առած «Բարել» կեդրոնը բնական արտայայտութիւնն է մեր եկեղեցւոյ ազգային առաքելութեան, ինչպէս նաեւ անոր նպատակներէն մէկն է գանատայիներուն ծանօթացնել հայ ժողովուրդի հարուստ մշակոյթը եւ ազգային արժէքները»:

Սոյն ձեռնարկի հովանաւոր՝ Գանատահայց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Հովակիմ-

եան, իր խօսքի ընդմէջէն նշեց, որ թէեւ «Բարել» կեդրոն նախաձեռնութիւնը կը նպատակադրէ ամրացնել գանատահայց կապը իրենց հայկական արմատներուն հետ, սակայն, միեւնոյն ժամանակ իր գործունէութեան գանազան ոլորտներով կեդրոնը պիտի դառնայ Գանատայի բազմամշակութային խճանկարին ուշագրաւ մէկ մասնիկը, այնտեղ գործող անդամներուն եւ համակիրներուն նուիրական ծառայութեամբ:

Իր խօսքի ընդմէջէն, ՀՀ Դեսպան՝ տիար Լեւոն Մարտիրոսեան ընդգծեց ունեցած իր հաւատքը՝ հանդէպ «Բարել» կեդրոնին, նշելով որ կեդրոնը յաջողութեամբ պիտի կատարէ ստանձնած ծրագիրներու գործադրութիւնը: Ապա, յաջորդաբար բեմ բարձրացան Թորոնթոյի քաղաքապետ՝ տիար Ճոն Թորի, Օնթարիոյի Կրթութեան նախարարուհի՝ Ազնուափայլ Միթգի Հանթեր եւ Խորհրդարանի անդամ՝ տիար Ճոն Մըքքէյ, որոնք բարձր գնահատեցին Սբ. Երրորդու թիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ եւ հայ համայնքի բազմաթիւ ծառայութիւնները կրթական, մշակութային, ընկերային եւ յատկապէս մարդասիրական ծիրէն ներս: Մեծարգոյ հիւրերը իրենց ուրախութիւնը յայտնեցին «Բարել» մեկնարկի առթիւ մատնանշելով, որ վերոյիշեալ աշխատանքը շարունակութիւնն ու ընդլայնումն է այն գործընթացին, որ Գանատան յաջողութեան կը հասցնէ որպէս երկիր:

Աւարտին, տեղի ունեցաւ լուռ աճուրդ եւ նուէրներու բաշխում, որմէ ետք հանդիսավարները շնորհակալական յատուկ խօսք ուղղեցին կամաւոր ծառայողներուն եւ գիրենք հրաւիրեցին բեմ, առ ի գնահատանք իրենց նուիրումին: Բարի երթ եւ յաջողութիւն կը մաղթենք «Բարել» կեդրոնին:

ՎԵՐԱՊՐԵԼՈՎ ԹԱՐԳՄԱՆՉԱՑԻ ՀՈԳԻՆ

Շարունակուած էջ 15-էն

Աստուածաշունչ մը, որուն թէ գրութեան ոճը եւ թէ պատկերներու ներկայացումը հաճելի պիտի ըլլայ բոլորին: Ան, որպէս Արաբական Ծոցի երկիրներու Աստուածաշունչի Ընկերութեան Ընդհանուր Քարտուղար, ամփոփ ձեւով ներկայացուց ընդհանրապէս ընկերութեան նպատակն ու տարած աշխատանքը, որ իրականութեան մէջ հերոսական աշխատանք է: Աւելի քան 200 երկիրներու մէջ Աստուածաշունչի Ընկերութեան գրասենեակներն ու աշխատակազմերը, իրենց նպատակը դարձուցած են Աստուածաշունչը հասանելի դարձնել բոլորին՝ իրենց մայրենի լեզուներով: Ի՞նչ մեծ ուրախութիւն է ունենալ Աստուածաշունչը մայրենի լեզուով: Ուրախ եմ, որ փոքրիկներու այս Աստուածաշունչը ամիսներու աշխատանքէ ետք, նաեւ գտնուեցան անոր թարգմանը, շարադրողը եւ տպագրողը, ինչպէս նաեւ բարերարները, որպէսզի այսօր, որպէս նուէր՝ բաժնուի բոլորին: Մենք վստահ ենք, որ մեծ հաճոյքով պիտի կարդան բոլորը եւ ինչու չէ շատերու կեանքը պիտի փոխուի այս ընթերցումներով եւ անոնք իրենց կեանքի ծրագիրներուն եւ աշխատանքներուն մէջ, օրհնութիւն պիտի գտնեն Աստուածմէ: Ի վերջոյ, ան իր շնորհակալութիւնը յայտնեց Գերպ. Հայր Սուրբին, որ առաջին օրէն, երբ գերմաներէն օրինակը տեսաւ, փափաքեցաւ եւ

քաջալերեց որ անպայման այս հրատարակութիւնը իր յաջողութիւնը ունենայ:

Գերապատիւ Հայր Սուրբը բեմ բարձրանալով շնորհաւորեց Տ. ք. Հրայրը եւ իր անձնակազմը իրենց տարած աշխատանքին համար: Անգամ մը եւս շեշտեց Աստուածաշունչի կարեւորութիւնը հայտնաբերուող գաստիարակութեան համար, որպէս ամենօրեայ սնունդ, որուն պէտքը անփոխարինելի է: Մեր համոզումն ու հաւաքը է, որ Աստուածաշունչը կը վերանորոգէ, կ'երիտասարդացնէ մարդը, կը հանգստացնէ յուսահատը, կը գօտեմարտէ յուսահատը եւ կը բժշկէ հիւանդը: Հայր Սուրբը գնահատեց Աստուածաշունչի Ընկերութեան տարած աշխատանքը, ուժ եւ կորով մաղթելով անոնց: Ապա բեմ հրաւիրեց Արժ. Տէր Հայրը, Ազգ. Վարչութեան Ատենապետ Պրն. Սուրբ Դարբինեանը, Տէր եւ Տիկ. Ճէպէճեանները եւ Աստուածաշունչի Ընկերութեան Քուէյթի բաժնի տնօրէն՝ Եուսէֆ Սապրին, որպէսզի ըստ հայկական սովորութեան կատարուի գրքին գինեձօնը՝ անոր առաջին օրինակին վրայ գինի հեղելով:

Արարողութեանէն ետք բոլոր ներկաները իրենց օրինակները ստանալով, մեկնեցան եկեղեցիէն, իրենց հետ տանելով չիշատակելի օրուան մը տպաւորութիւնները եւ իրենց աւօրեան լեցնող Աստուծոյ խօսքը՝ «Երիտասարդ Ընտանիքին Աստուածաշունչը» գիրքը: Ներկայ մը:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ՝ ՍԻՐՈՅ ԵՒ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1. Չկայ երկրորդ կէս հասկացութիւն. Մեր կեանքի ճանապարհին մենք կը հանդիպինք շատ տարբեր մարդոց, որոնք կը լեցնեն մեր կեանքը եւ իմաստ կու տան անոր: Երբեմն այդ մարդիկ մեր հետ կը մնան ամբողջ կեանքի ընթացքին, երբեմն՝ ընդամէնը քանի մը օր, ամիս կամ տարի: Ամենաքանչեւին այն է, որ անոնցմէ իւրաքանչիւրը մեզի որեւէ բան կը սորվեցնէ կեանքի եւ իր մասին: Եւ նոյնիսկ ամենացաւոտ բաժանումները հնարաւորութիւն են հասկնալու, թէ մենք ով ենք կամ ալ ով չենք իրականութեան մէջ:

2. Միշտ կայ ունի մէկը, որ մեզ կը համապատասխանէ. Կարեւոր է, թէ ինքնագարգացման որ փուլին ենք, մենք կրնանք գրաւել զայն, որուն մենք արժանի ենք: Ատիկա տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ մենք կը հասկնանք, որ ինքնաբաւ ենք առանց որեւէ կէսի: Այդ ատեն մենք կը հանդիպինք նոյնպիսի ինքնաբաւ մարդու:

3. Մէրը պայմաններ չի ճանչնար. Սիրել կրնայ մեզմէ իւրաքանչիւրը: Եթէ կը զգանք, որ պէտք է փոխուինք, որ մեզ սիրեն, կը նշանակէ, մենք սխալ մարդու հետ ենք: Կամ ալ խնդիրը մենք ենք, մեր ցած ինքնագնահատակա-

նը, իբր մենք արժանի չենք այդ մարդուն: Ան, զոր կը գրաւենք մենք, մեր ինքնարժեքի արտացոլացումն է: Ուրեմն պէտք է նախ մենք մեզ սիրենք:

4. Մենք կրնանք շատերը սիրել. Մէրը չի վերջանար, եթէ մենք անկէ չափազանց շատ տուած ենք մէկ մարդու: Մէրը կը սնուի սիրով: Որքան շատ մենք կու տանք, այնքան շատ կ'ունենանք անկէ: Մենք կրնանք անսահմանօրէն սիրել շատ մարդիկ, տարբեր պատճառներով եւ շատ բնական է մարդոց ըսել այդ մասին:

5. Ամէն ինչ քեզմէ կախեալ է. Եթէ դուն ազնիւ ես, քնքուշ, բարի անոր հանդէպ, որուն կը սիրես, բայց ան կը կոտրէ սիրտդ, ատիկա չի նշանակեր, թէ դուն որեւէ բան սխալ ըրած ես: Ամէնէն յաճախ ան է, որ պատրաստ չէ սիրոյ նման մակարդակի: Եւ իւրաքանչիւրը իր սրտին մէջ ունի իր վերքերը, որոնք անհրաժեշտ է բուժել: Բայց ամէն մէկը չէ, որ պատրաստ է նման բուժման:

6. Յաւը յաւերժ է. Երբ մեզի ցաւ կը պատճառեն, պէտք է ընդունիլ զայն եւ վերապրիլ: Այդպէս միշտ չ'ըլլար, բայց կարեւոր է ընդունիլ զայն, որպէսզի սկսիք վերականգնման գործընթացը եւ առաջ շարժիք:

ՉՈՅԳԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԸ ԿԻՍԵՆ ՏՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԱԵՒԼԻ ԵՐՁԱՆԻԿ ԵՆ

Կ'ըսեն, որ իրական տղամարդիկ պէտք է երթան աշխատանքի եւ ընտանիք պահեն: Իսկ անոնց գեղեցիկ կէսերը այդ ժամանակ պէտք է մնան տունը, խնամեն փոքրիկները եւ ընտանեկան շարժարաւէտութիւն ստեղծեն: Սակայն, եթէ ձեր ժամացոյցը քանի մը տասնեակ տարիներով ետ չէ մնացած, ուրեմն դուք պիտի ըսէք, որ դերերը այդպիսի տեղաբաշխումը շատոնց արդէն արդիական չէ:

Այժմ աղջիկները տղամարդոցմէ ոչ պակաս կը հետեւին իրենց ասպարէզին եւ ամէն օր աշխատանքի կ'երթան: Վերադառնալով, սակայն, անոնք ամբողջութեամբ կը լծուին տնային գործերուն՝ մաքրութիւն ընել, ընթրիք պատրաստել, ամանները լուալ: Հաւանաբար անոնց տղամարդիկը ուղղակի տեղեակ չեն այն հետազօտութիւններուն մասին, որոնք ապացուցած են, որ տնային պարտականութիւններուն բաժանումը սիրահարներուն կեանքը աւելի երջանիկ կը դարձնէ: Առաջին այսպիսի հետազօտութիւնը կատարած մասնագէտը ուսումնասիրած է բազմաթիւ գոյգեր եւ եկած այն եզրակացութեան, որ կենցաղային պարտականութիւններուն բաժանումը յարաբերութիւններու ներդաշնակու-

թեան գրաւականն է: Քիչերն են, որ կը սիրեն տնային գործերով զբաղիլ: Սա կայն, եթէ տղամարդը կ'օգնէ իր տիկնոջ, վերջինս կը զգայ, որ զինք կը գնահատեն եւ աւելի քիչ կը վրդովի: Բացի այդ, պարտականութիւններու հաւասար բաժանման պարագային՝ սիրահարները աւելի ուշ կը յոգնին, բան մը, որ կը նշանակէ, որ անոնց ուժերը պիտի բաւեն մինչեւ ուշ գիշեր: Այս հասարակ գաղտնիքը կրնայ փրկել զանոնք, որոնք նոր կը սկսին ընտանեկան կեանքը: Երկու տարիէն ոչ աւելի ամուսնացած 220 գոյգերու հարցումը ցոյց տուած է, որ պարտականութիւններու հաւասար բաժանումը կ'օգնէ անոնց վերապրելու ընտանեկան առաջին խնդիրները եւ հասնելու փոխըմբռնման: Այսպիսի փոքր բացայայտումները ցոյց կու տան, թէ որ քան կարեւոր է ընտանեկան կեանքին մէջ կիսել ոչ միայն երջանիկ պահերը, այլ նաեւ ձանձրալի ամէնօրեայ գործերը: Եւ այսպէս, եթէ կ'երագէք ամուր եւ առողջ յարաբերութիւններ ունենալ, մի մոռնաք կիսել կենցաղային գործերը: Տղամարդիկ ուղղակի պէտք է աւելի յաճախ առաջարկեն իրենց օգնութիւնը եւ երջանկութիւնը երկար սպասեցնել չի տար:

ՅԱԶՈՂԱԿ ԿՆՈՋ 7 ՈՍԿԷ ԿԱՆՈՆ

Սորվիր երջանկութիւն ճառագել: Երջանկութիւն ճառագող կինը ուժեղ մագնիս է տղամարդոց համար: Ապացուցուած է, որ եթէ երջանիկ ժպիտ «նկարես», կը մտնես անհրաժեշտ վիճակի մէջ, իսկ յետոյ կու գայ իրական երջանկութիւնը:

Գիշեր-ցերեկ մի մտածեր այն մասին, թէ դուն որքան պէտք է բարձրացնես ինքնագնահատականդ: Չափէն մեծ ցանկութիւնը երբեմն խոչընդոտ կը դառնայ սեփական ինքնաիրացման ճանապարհին: Ուղղակի ապրիր եւ հաւատա՛, որ կը հասնիս այն ամէնուն, զոր կը փափաքիս:

Կորչի կատարելութեան աւելորդ ձգտումը: Արտօնէ դուն քեզի անկատար ըլլալ: Նոյնիսկ եթէ որեւէ բան ուրիշներէն վատ կ'ընես, ատոր իրաւունքը ունիս, դուն պարտաւոր չես ամէն ինչի մէջ իտէալական ըլլալու:

Մոռցիր վախերու մասին: Պատկերացուր, թէ տեղի ունեցած է այն, ինչէն դուն այնքան կը վախնայիր՝ ամենավատը: Նախապէս տարբերակներ մտածէ, թէ ինչպէս վարուիս այդ պարագային: Եւ յիշէ, որ ինքնագնահատականը բարձրացնելու համար օգտակար է որեւէ նոյնիսկ բացասական փորձը:

Գործերը մի յետաձգեր: Որքան երկար կը պատրաստուիս որեւէ բան սկսելու, այնքան անորոշ կը թուին դժուարութիւնները: Մի վախնար նոր բան սորվելէն եւ զայն փորձելէն: Դուն չես գիտեր, թէ երբ ատիկա քեզի ծառայութիւն պիտի մատուցանէ:

Հետեւիր արտաքինիդ: Մարգարտ, լողաւազան, դիմաշարդար, վարսաշարդար: Ոչինչ այնքան չի բարձրացներ ինքնագնահատականը, որքան նոր կերպարը, նոր սանտրուածքը:

3 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ, ՈՐՈՆՔ ԶԵՐ ԱՌԱՒՕՏԸ ԲԱՐԻ ԿԸ ԴԱՐՁՆԵՆ

1. «Աստուած կու տայ անոր, որ շուտ կ'արթննայ»: Սկիզբի համար պէտք է սորվիլ կանուխ արթննալ: Կը թուի, թէ դժուար է, բայց կանուխ արթննալ կ'երաշխաւորէ առաւօտեան հրաշալի առօրեայ թիւն, ի հարկէ ժամանակին քնանալու պայմանով: Արթննալու իտէալական ժամանակ կը համարուի առաւօտեան 6-ը եւ աւելի շուտ: Իզուր չէ, որ մեր նախնիները կ'արթննային մայրամուտի հետ եւ՝ առանց որեւէ զարթուցիչի: Աւելի ուշ արթննալը յղի է հոգեյուզական վիճակի խանգարումով, որոշ հիւանդութիւններու սրումով, դիմադրողականութեան նուազումով, գլխացաւերով, մեծ խորթակով եւ նոյնիսկ ճնշախտով:

Փորձեցէք գոնէ մէկ շաբաթ քնանալ 22-23:00-էն ոչ ուշ եւ արթննալ 6:00-ին: Հետեւեցէք ձեր ինքնագրագողութեան եւ տրամադրութեան: Վստահ եղէք, որ դուք գրեթէ անմիջապէս զրական պիտի զգաք: Եւ այն պատրուակը, թէ դուք «բու» էք, արդարացում չունի: Մենք բոլորս ի բնէ «արտոյտներ» ենք, ատիկա մեր մէջ զրուած է բնութենէն, ուր մայրամուտին հետ բոլոր կենդանի արարածները կը քնանան, իսկ կ'արթննան արեւածագին հետ: Մեզմէ շատերուն «բու» դարձուցած է քաղաքակրթութիւնը, կեանքի խելայեղ արագութիւնը եւ յառաջացած ճարտարագիտութիւններու դարը, բայց զայն կարելի է շտկել դիւրութեամբ:

2. «Պատրաստուիր մարմնամարզութեան»: Սովորութիւն դարձնելով կանուխ արթննալը, մենք քանի մը վայրկեան ազատ ժամանակ պիտի ունենանք, որոնք կարելի է անցնել կատարելով առաւօտեան վարժութիւններու համա-

լիր: Բայց մարմնամարզութիւնը մի խառնէք սփորթով լիարժէքօրէն զբաղելուն հետ: Մարմնամարզութիւնը ուղղուած է ներքին օրկաններու աշխատանքի աշխուժացման, արեան շրջանառութեան բարելավման, կապերու եւ յօդերու մարզումին, որ պիտի օգնէ օրուան ընթացքին խուսափելու սովորական կենցաղային վնասուածքներէն: Այդ պատճառով ձեզի համար առանձնացուցէք 10-15 վայրկեան, հանգստացուցէք մկաններու հիմնական խումբերը, կատարեցէք քանի մը պարզ վարժութիւն: Իտէալական առաւօտեան մարմնամարզութիւնը, զայն բնութեան գիրկին մէջ կատարելն է՝ թոքերը թթուածինով հարստացնելով: Բայց սովորական բնակարանի պայմաններուն մէջ հնարաւոր է պարզապէս օդափոխել սենեակը: Կանոնաւոր կերպով մարմնամարզութիւն կատարեցէք ամէն օր, ներառեալ հանգստեան օրերուն եւ մի մոռնաք անկէ առաջ կիտրոնի շերտիկով 1-2 բաժակ տաք ջուր խմել:

3. Տաք եւ պաղ ցնցուղներ. Այո, առաւօտեան ծէսերը պէտք է աւարտել տաք եւ պաղ ցնցուղներով: Տաք եւ պաղ ցնցուղներուն հերթագայութիւնը կ'աշխուժացնէ արեան շրջանառութիւնը, կ'աշխուժացնէ նիւթափոխանակութիւնը, կը բարելաւէ դիմադրողականութիւնը եւ կը մարզէ մարմինը ընդհանուր առմամբ: Մէկ խօսքով, անիկա առօրեայ թեւաբեր կը լիցեալորէ ամբողջ օրուան համար: Առաւօտները այս ոչ բարդ սովորութիւնները իրականացնելով՝ պիտի նկատէք, որ «առաւօտը բարի չէ» ասոյթը հաստատ ձեր մասին չէ:

ՈՒՐՅՈՎ ԹԵՅԻՆ ԲՈՒԺԻՉ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ուրցը իւրայատուկ բոյս է, որ մարդկութեան յայտնի է հին ժամանակներէն: Անիկա ունի հաճելի համ եւ բուժիչ յատկանիշներ: Ուրցը ունի մանրէասպան, ցաւազրկող, պրոնիսները լայնցնող յատկանիշներ: Անիկա արագ կը վերականգնէ վնասուածքները, մարմինէն դուրս կը հանէ որդերը: Ուրցը նաեւ կը կարգաւորէ նիւթափոխանակութիւնը, որ չափազանց կարեւոր է անոնց համար, որոնք կը հետեւին իրենց կշիռքին:



պրոնիսիտ եւ այլն: Ուրցով ըմպելիներ Քառորդ գաւաթ ջուրին աւելցուցէք 1 թ/դ չորցուած ուրց: Եռացուցէք եւ ձգեցէք հանգի 10 վայրկեան: Լեցուցէք գաւաթի մէջ, աւելցուցէք եռացացած ջուր եւ 5-7 վայրկեան եւս ձգեցէք մնաց, ասպա՛ քամեցէք ու վայրկեցէք համեղ թէյը: Ուրցը, սակայն, խորհուրդ չի տրուիր կազմիրիթ, ստամոքսի խոց, վահանագեղձի խնդիր,

շաքարախտ ունեցող մարդոց: Յղիներուն եւ փոքրիկներուն խոր-

հուրդ կը տրուի հարցնել բժիշկի կարծիքը:

Ռոնալդուն Աշխարհի Լաւագոյն Ֆուտպոլիստն է



Լոնտոնում տեղի ունեցաւ ՖԻՖԱ-ի տարուայ լաւագոյնների մրցանակաբաշխութիւնը:

Տարուայ լաւագոյն ֆուտպոլիստն ճանաչուեց Քրիստիանու Ռոնալդուն, ով գերազանցեց Լէօ Մեսսիին եւ Նեյմարին:

Ռոնալդուն նախորդ մրցաշրջանում Ռեալի կազմում նուաճեց բոլոր հնարաւոր տիտղոսները, բացառութեամբ Սպանիայի գաւաթի, եւ աւելացրեց Ախոյեանների լիգայում իր խփած կոլերի թիւը՝ թարմացնելով իր խփ կեկորդը:

Զիդանը ՖԻՖԱ-ի Վարկածով Լաւագոյն Մարզիչ է ճանաչուել

Մադրիդի Ռեալի գլխաւոր մարզիչ Զիդանը Զիդանը ՖԻՖԱ-ի կոմիտեի ճանաչուել է 2017 թուականի լաւագոյն մարզիչ:

Ֆրանսացի մասնագէտը չաղթել է Եւրոպեայի եւ Չելսիի իտալացի մարզիչներ Մասիմիլիանօ Ալեգրիին եւ Անտոնիօ Կոնտէին:

Յիշեցնենք, որ նախորդ մրցաշրջանում Զիդանը կարողացել է Ռեալի հետ դառնալ Սպանիայի ախոյեան եւ երկրորդ տարին անընդմէջ նուաճել ախոյեանների լիգայի գաւաթը՝ դառնալով լիգայի պատմութեան մէջ նման ցուցանիշ գրանցած առաջին մարզիչը: Ֆրանսացին չաղթել է նաեւ աշխարհի ախոյեանների առաջնութիւնում, Սպանիայի եւ Եւրոպայի սուպերգաւաթներում:

Բուֆոնը՝ Տարուայ Լաւագոյն Դարպասապահ

Թուրինի «Եւրոպեանտուսի» եւ իտալիայի հաւաքականի լեգենդար խաղացող, 39-ամեայ Զանլուիջի Բուֆոնն արժանացաւ տարուայ լաւագոյն դարպասապահի մրցանակին Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի վարկածով:



Մրցանակին հաւակնում էին նաեւ Մադրիդի «Ռեալի» քոս-թաուիքացի դարպասապահ Կեյլոր Նաւասը եւ Միլանի «Բաւարիայի» գերմանացի դարպասապահ Մանուել Նոյցերը:

«Բարսելոնան» Ցմահ Պայմանագիր Կ'առաջարկի Մեսսիին

«Բարսելոնան» արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսսիին կ'առաջարկի ցմահ պայմանագիր: Այդ մասին յայտարարել է կատալոնական ակումբի գլխաւոր տնօրէն Օսկար Գրաուն, որը նաեւ նշել է, թէ կողմերը Յունիսին կնքել են չորս տարուայ պայմանագիր, թէեւ այդ մասին պաշտօնական հաղորդագրութիւն չի եղել:



«Մեսսին չորս տարուայ պայմանագիր է կնքել Յունիսին, բայց ակումբը նրան կ'առաջարկի ցմահ պայմանագիր: Մեր գաղափարն այն է, որ մանկութիւնից այստեղ գտնուող Լեոն ակումբի հետ լինի մինչեւ կեանքի վերջ, քանի որ նա խորհրդանիշ է: Ցանկանում ենք, որ նա խաղացողի կարիերայի աւարտից յետոյ էլ լինի ակումբի հետ», - Գրաունի խօսքը մէջբերում է ESPN-ը:

Ոչ պաշտօնական տուեալներով, «Բարսելոնան» ու Մեսսին դեռ չունեն նոր պայմանագիր եւ յաջորդ տարուայ ամրանը ֆուտպոլիստը կարող է անվճար տեղափոխուել այլ ակումբ:

Ծանրամարտի Հայաստանի Երիտասարդական Հաւաքականը Լաւագոյնն է Եւրոպայում



Ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց երիտասարդական հաւաքականը լաւագոյնն է Եւրոպայի առաջնութեան թիմային պայքարում:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Ալբանիայի Դուրրես քաղաքում ընթացող մրցաշարում Հայաստանի U23 տարեկանների թիմը նուաճել է 8 ոսկէ մետալ՝ դառնալով թիմային հաշուարկով առաջինը Եւրոպայի առաջնութիւնում: Երիտասարդ ծանրորդները նուաճել են նաեւ մէկական արծաթէ եւ պրոնզէ մետալներ:

Հայաստանի կանանց մինչեւ 20 տարեկանների թիմը եւս առաջինն է թիմային հաշուարկով, որտեղ հայ ծանրորդները նուաճել են 6 ոսկէ մետալ:

Եւրոպայի երիտասարդների այս առաջնութիւնում ախոյեաններ դարձան Անդրանիկ Կարապետեանը, Գոռ Մինասեանը, Կարուշ Ղուկասեանը, Սիմոն Մարտիրոսեանը, Սոնա Պողոսեանը, Արփինէ Դաւալեանը:

«Մանչեսթեր Եունայթըդի» Սեմաացիոն Պարտութիւնը

Անգլիայի առաջնութեան 9-րդ տուրում սեմաացիոն պարտութիւն կրեց «Մանչեսթեր Եունայթեդը», որը հիւրընկալուեց Պրեմյեր լիգայի նորեկ «Հադերսֆիլդ Սիթիին»: Հիւրերը պարտուեցին 1:2 հաշուով՝ երկու կոլ բաց թողնելով առաջին խաղակէստում, 5 րոպէսում:

23-րդ րոպէին վնասուածքի պատճառով փոխարինուեց պաշտպան Ֆիլ Զոնսը: Նրան փոխարինած շուէր Վիկտոր Լինդելլոֆի երկու սխալներից յետոյ էլ Դաւիթ Դէ Խեան ստիպուած եղաւ երկու անգամ գնդակը հանել դարպասից: Առաջին կոլի դրուագում սխալուեց նաեւ սպանացի կիսապաշտպան Խուան Մատան, որը դաշտի կեդրոնում կորցրեց գնդակը: Երկրորդ կոլի դրուագում «Հադերսֆիլդի» բեւբիացի յարձակուող Լորան Դեպուատը արդիւնաւէտ փոխանցումը ստացաւ դանիացի դարպասապահ Յոնաս Լոսլից:

Ընդմիջմանը պարտուելուց ժողջ Մուրրինտոն երկու փոփոխութիւն կատարեց. Խուան Մատային փոխարինեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը, իսկ ֆրանսացի յարձակուող Անտոնի Մարտիալին՝ անգլիացի յարձակուող Մարկուս Ռեշֆորդը, որը վերջնամասում կրճատեց հաշուի տարբերութիւնը:

Բայց դաշտի տէրերը յամառ պայքարում կարողացան պահպանել չաղթական հաշիւը: «Մանչեսթեր Եունայթեդը» ընթացիկ առաջնութիւնում կրեց առաջին պարտութիւնը:

«Մանչեսթեր Սիթիին» տանը 3:0 հաշուով վստահ չաղթանակ տարաւ «Բարնլիի» նկատմամբ: Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած թիմը 25 միաւորով առաջին տեղում է եւ արդէն 5 միաւորի առաւելութիւն ունի «Մանչեսթեր Եունայթեդի» նկատմամբ:

Մոսկուայի «Արարատը» Յաղթանակ է Կորզել

Ֆուտպոլի Ռուսաստանի երկրորդ դիւիզիոնի առաջնութեան «Կեդրոն» գօտու մրցաշարի 14-րդ տուրում Մոսկուայի «Արարատը» մրցակցի դաշտում նուազագոյն հաշուով չաղթել է «Կալուգային»: Հիւրերի չաղթանակն կոլը 85-րդ րոպէին խփել է ռուսաստանցի կիսապաշտպան Ալեքսէյ Ռեբկոն, որն անվրէպ է իրացրել 11 մեթրանոց հարուածը:

«Արարատը» 38 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ 12-ական միաւոր գերազանցում երկրորդ տեղում գտնուող «Ռյազանին»:

ՍԻՊԻԼԻ ԵՒ ԱՆՏՐԻԻ ՀԻԱՍՔԱՆՉ ՀԱՍԵՐԳԸ

Շարունակուած էջ 7-էն

մասնակցութիւնը բերին հերոսական Արցախին նուիրուած երգի կատարումին:

Եղածը Սիպիլի եւ Անտրէի նուիրուած փոքր փառաստօնի նմանող համերգ մըն էր, որմէ ներկաները բաժնուեցան հայրենական

գեղեցիկ երեկոյի մը վայելքի ըմբռնած ըլլալու հոգեկան մեծ բաւարարութեամբ:

Կը շնորհաւորենք կատարողներն ու սոյն յիշատակելի երեկոյթի կազմակերպիչները, մաղթելով նորանոր յաջողութիւններ ի փառս հայ մշակոյթի:

Գ. ՄՈՒՆՅԱՆ




SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

ՄԱՐԶԴ



Տէր եւ Տիկին Կարապետ Մուղալեան եւ զաւակունք Տէր եւ Տիկին Ժիրայր Մուղալեան եւ զաւակը Տիար Մովսէս Մուղալեան եւ զաւակը Համայն Մուղալեան, Օհանեան, Տէր Նիկողոսեան եւ Կէոքէոզեան ընտանիքներ եւ ազգականներ կը գուժեն իրենց եղբօր, հօրեղբօր, քեռիին եւ հարազատին՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՒՂԱԼԵԱՆ

Մահը որ, տեղի ունեցաւ Երեքշաբթի 24 Հոկտեմբեր 2017-ին, յետ կարճատեւ հիւանդութեան՝ պէյրուլթի մէջ:

ԵՐԵՒԱՆԻ ՕՊԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ

Շարունակուած էջ 13-էն

լիւնցնել մարդկանց, որ սա մեզ համար միակ հայկական օպերան է աշխարհում: Մենք պէտք է դարձնենք դա մի գոհար, որով մարդիկ հպարտ կը լինեն: Մենք ունենք այդ հնարաւորութիւնները: Ինչպէս գիտենք, ամէն ինչ ժամանակ, համբերութիւն եւ աշխատասիրութիւն է պահանջուած: Իմ կեանքի նպատակներից մէկը ամէն ինչ աւելի հեշտացնելն է. Օպերային թատրոնի վերանորոգումը կարող է լինել իմ կեանքի ամենամեծ եւ դժուարին մարտահրաւէրներից մեկը, բայց ես համոզուած եմ որ ամէն ինչ կ'ընթացայ նախատեսածին համապատասխան:

Հ. Այդ ծրագրերը իրականացնելու համար ո՞րտեղ էք տեսնում դոնորների եւ հովանաւորների դերը:

Պ. Անհատ բարերարները, կորպորատիւ հովանաւորները եւ հիմնադրամները կարող են նաեւ դեր խաղալ, համոզուելու որ Երեւանի օպերային թատրոնը շարունակուած է բարգաւաճել ներկայում եւ ապագայում:

Մեխանիզմների լայն շրջանակ կա, որոնք մեծապէս կաջակցեն: Դրանք ներառում են համերգի, մի քանի համերգների եւ նոյնիսկ մի ամբողջ ներկայացումների սեզոնի հովանաւորումը, Հայաստանի տարբեր մարզերում կամ արտասահմանում ներկայացումների ապահովուկան եւ արուեստագիտական վարպետական հմտութիւնների հովանաւորումը: Նոյնքան նշանակալից է որ աջակցութիւնը կարող են ցոյց տալ մեր նախատեսած թանգարանի եւ գրադարանի կառուցմանը եւ կահաւորմանը: Այս առումով, խոշոր նուիրատուների անունով կարող են անուանակոչուել թանգարանը եւ գրադարանը, որպէս ճանաչում իրենց բարեհոգութեան: Պատկերացրէք ինչքան հրաշալի կը լինի անհատ բարերարի կամ ամբողջ նուիրատու ընտանիքի համար իրենց անունը անժամկէտ ասոցացնել մեծ մշակու-

թային հաստատութեան հետ: Մի բան մենք պէտք է լիւնցնենք, որ մեր մշակույթը մեր ամենաուժեղ եւ ամենատեսանելի արժանիքն է: Եթէ մեր մշակութային հաստատութիւնը, մշակույթը ծաղկի մեր ժողովուրդը նոյնպէս կը ծաղկի:

Հ. Երեւանի օպերային թատրոնում Ձեր պաշտօնը զբաղեցնելուց ի վեր, դուք հաստատութիւնում մեկնարկել եք խստապահանջ վարպետութեան դասերի ծրագիր՝ ուսուցանող աշխարհառջակ երաժիշտների կողմից: Դուք մտադրուած էք շարունակել այս ծրագիրը:

Պ. Ես շատ բախտաւոր եմ, որ աշխատել եմ աշխարհի մեծագոյն օպերային երգիչների հետ եւ ինձ բախտ է վիճակուել լսել այդ հիանալի արուեստագետներին աշխարհի ամենամեծ օպերային թատրոններում: Ինչ սկսել եմ աշխատել Երեւանի օպերային թատրոնում՝ երգիչների մեծամասնութեան կողմից դրական պատասխան եմ ստացել նրանց այցելութեան եւ մեր երգիչների հետ աշխատելու վերաբերելով: Ձոն Ֆիշերը, ով Նիւ Եորքի Մետրոպոլիտեն օպերայի փոխտնօրէնն է, երկու անգամ եկել եւ աշխատել է մեր երաժիշտների հետ: Մեր երաժիշտների հետ աշխատել են այնպիսի մեծութիւններ, ինչպիսիք են Հովարդ Վատկինսը, Մետրոպոլիտեն օպերայի լավագոյն դաշնակահար, Աննա Մարչվիլիսկա՝ գլխաւոր դաշնակահար Վարչաւայի օպերայից, Դանեան Չոլան՝ Հիւսթոն Գրանդ օպերայից եւ յայտնի մեներգիչներ, ինչպիսիք են՝ Բարբարա Ֆրիտոլին, Վիեննայի պետական օպերայի, Մետրոպոլիտեն օպերայի եւ Լա Սկալայի աստղը, ինչպէս նաեւ մեր հայրենակից Բարսեղ Թումանեանը, ով հիանալի մեներգիչ է: Իմ ծրագիրը լաւագոյն մարդկանց Հայաստան բերելն է եւ լաւագոյնս բացահայտել մեր երգիչներին:

Հ. Ա. Սպեոնիարեանի անուան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրէն եւ գեղարուեստական ղեկավար

նշանակաւուելուց արդեն մեկ տարուց աւել է անցել՝ ի՞նչ անձնակազմ եւ մասնագիտական առաւելութիւններ կան Հայաստանում ապրելու եւ աշխատելու համար:

Պ. Նախ եւ առաջ, պէտք է նշեմ, որ երբեք չեմ պատկերացրել, որ կ'ապրեմ Երեւանում, ինչպէս նաեւ չէի պատկերացնի, որ կը տեղափոխուեմ Մոսկվա 1990թ. եւ կդառնամ ԽՍՀՄ-ի կամերային նվագախմբի ղեկավարը: Ոչ ոք չի կարող պատկերացնել թէ ինչ նոր հորիզոններ կը բացուի իրենց առջեւ: Թատրոնի գեղարուեստական ղեկավար, հոյակապ տենոր Գեղամ Գրիգորեանի մահից յետոյ, ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսեանը հրաւիրեց ինձ Հայաստան՝ թատրոնի գեղարուեստական ղեկավարի պաշտօնը ստանձնելու առաջարկութեամբ: Երբեք չէի պատկերացնի, որ կեանքն ինձ նման անակնկալ կը մատուցի: Յետոյ առաջարկ ստացայ դառնալ թատրոնի տնօրէն, որը նոյնպէս չէի կարող պատկերացնել: Բաւականին դժուար եւ ուսուցողական ժամանակահատուած է եղել ինձ համար: 700 հոգու հետ ծանօթանալը բաւականին ծանր խնդիր է:

Հ. Ինչպիսի՞նք են ձեր փորձը հայ օպերային հանդիսատեսի հետ:

Պ. Ինձ մօտ ստեղծուել է տպաւորութիւն, որ այստեղի հանդիսատեսը սիրում է երաժշտութիւն եւ յատկապէս կարեւորում է հայկական ներկայացումները: Դահլիճը լեցուն է, երբ ներկայացում են «Գայանէ»-ն, «Սպարտակ»-ը, «Անուշ»-ը, «Սալայի-Նովա»-ն, «Դաւիթ Բեկ»-ը եւ այլ հայկական ստեղծագործութիւններ:

Հ. Ի՞նչ էք կարծում, ինչպէս կարելի է այժմայեայտ երիտասարդութեանը գրաւել դասական երաժշտութեամբ ընդհանրապէս եւ յատկապէս օպերայով:

Պ. Իհարկէ մենք կարիք ունենք

«կրթել» մեր հանդիսատեսին, սկսելով բեմադրել մանկական բալետային եւ օպերային ներկայացումներ, այնուհետ ստեղծել հետաքրքիր, սաղրիչ, գրաւիչ բեմադրութեամբ հանրայայտ ստեղծագործութիւններ:

Հ. Կարծում էք ճիշտ է արդեօք ունենալ ժամանակակից նոր օպերային ստեղծագործութիւններ:

Պ. Ես վստահ եմ, որ խիստ անհատաշատ է ամեն թատերաշրջանի ընթացքում ունենալ ժամանակակից բալետային կամ օպերային ներկայացումներ:

Եթէ մենք չբեմադրենք մեր հայ հիանալի կոմպոզիտորների ստեղծագործութիւնները ապա էլ ո՞վ:

Յաւօք, կոմպոզիտորների միութեան հին (Մովսէսական) համակարգը, որը գնում էր կոմպոզիտորների ստեղծագործութիւնները մնաց անցեալում: Ակնկալել որեւէ երրորդ անձից պատուէր՝ գուր յոյս է: Բայց յուսանք, որ ապագայում կը բեմադրուեն հայկական հրաշալի ստեղծագործութիւններ:

Հ. Որտե՞ղ էք տեսնում Օպերային թատրոնը հիմա տարի անց:

Պ. Դա կը լինի շքեղ երաժշտական ադամանդ Հարաւային կովկասում: Մենք ունենք բոլոր հնարաւորութիւնները այդ պատկերին հասնելու համար: Եւ դա իրական դարձնելու համար մեզ պէտք են նուիրուածութիւն, նպատակաւորութեամբ եւ մեծ ջանքեր:

Հ. Առաւօտեան սուրճ ըմպելիս ինչպի՞սի ստեղծագործական մտքեր են առաջանում Կոնստանտին Օրբելեանի մօտ:

Պ. Դժուար հարց է: Ամէն նոր օր իր հետ բերում է նոր գաղափարներ՝ թէ երազային եւ թէ իրականութեան վրայ հիմնուած: Ես ցանկանում եմ ամեն օրս դարձնել հիշարժան եւ դրական իմ եւ ինձ շրջապատող մարդկանց համար:

Statement of Ownership, Management, and Circulation table with columns for publication details, circulation numbers, and distribution percentages.

SEROP'S CAFE GREEK & LEBANESE FOOD SERVING BATON ROUGE SINCE 1979

ARMENIA FUND'S 20th INTERNATIONAL THANKSGIVING DAY

TELETHON 2017

NOVEMBER 23



LIVE BROADCAST 10AM-10PM PST

CENTRAL CALIFORNIA	SOUTHERN CALIFORNIA	SAN FRANCISCO & BAY AREA	LAS VEGAS
KGMC OTA Ch. 43.6 and Ch. 13.1 Comcast Xfinity Ch. 375 Northland Ch. 2 and Ch. 9 Noor TV Ch. 31.7	Armenian Channels & KVMD Network	KTSF OTA Ch. 26.1 DirecTV Ch. 26 Dish Network Ch. 26 Comcast Ch. 8 AT&T U-verse Ch. 8	ArMount TV

12 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENTAFUND.ORG

 [Facebook.com/ArmeniaFund](https://www.facebook.com/ArmeniaFund)
 [Twitter.com/ArmeniaFund](https://twitter.com/ArmeniaFund)
 [instagram.com/ArmeniaFund](https://www.instagram.com/ArmeniaFund)
 [YouTube.com/ArmeniaFundUS](https://www.youtube.com/ArmeniaFundUS)



VISIT & DONATE: www.ArmeniaFund.org or Call: 1-800-888-8897